


85

2-75

2nd 9/24



85
2.75

ԻՄ ԳԻՐԳԵ

№ 3

1927

88
3-75

Խմբագրւոյցմբ Վրաստանի Լուսժողովմասի Սոց. Դաս. Դլխ. Բաժնի
գրական-գեղարվեստական սեկցիայի

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԻՄ ԳԻՐԲԸ № 3

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԻ ՏՈՆԻ ՆՅՈՒԹԵՐԻ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿՈՂԼԵԿՏԻՎՆԵՐԻ ՅԵՎ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վ. Ս. Խ. Հ. ՊԵՏԻՐԱՏ

Թիֆլիս—1927.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Վ. Ի. Լենին—նկար	62
2. Մեծ Հոկտեմբերի տասնամյակը—Հ. Պ.	3
3. Ընկ. Ստալին—նկար	4
4. Հոկտեմբերյան Հեղափոխության 10-րդ տարեդարձին—Գ. Գրիգորյան	12
5. Գործարանը—Որբադուլիչ, Թարգմ. Հո. Պող.	13
6. Վոլջույն քեզ, կյանք—Թարգմ. ուսեր. Հար. Թումանյան	14
7. Պատմության անիվը—Թարգմ. ուսեր. Գիսակ	16
8. Տասը տարի—Գևորգ Գրիգ.	18
9. Հոկտեմբերի 25-ը—Կիրիլով, Թարգմ. Հո. Պ.	19
10. Սմոլնում—Գ. Լենին, Թարգմ. Գիսակ	20
11. Կարմիր գիրքը—Վ. Նորենց	22
12. Կարլ Մարքսի հիշատակին—Կիրիլով, Թարգմ. Գ. Գ.	23
13. Զնգն, Հոկտեմբեր—Թարգմ. ուսեր. Գ. Մեսյան	24
14. Ապագային—Վ. Կիրիլով, Թարգմ. Հո. Պող.	25
15. Հոկտեմբերյան նվեր մանուկներին—Գիսակ	26
16. Հոկտեմբեր—Թարգմ. ուսեր. Գևորգ	27
17. Նանն ու Թոռ—Վահան Միրաքյան	28
18. Տասը տարուց հետո—նկար Ս. Շ.	29
19. Զորատես—Ա. Բեդրմյոնսկի, Թարգմ. Գ. Մեսյան	31
20. Բոլշևիկ վոդնին—Յակովլև, Թարգմ. Հո. Պողոսյան	32
21. Հոկտեմբերյան հեքյաթ—Հակոբ Աղաբաբ	36
22. Հոկտեմբերի հետ դու քայլիր.—(բեմադրություն) Թարգմ. Հո. Պող.	39
23. Կոմյերիտ Մարոն—(բեմադրություն) Գիսակ	41
24. Լենին և Լիբկնեխտ—(բեմադրություն) Գ. Մեսյան	42
25. Յերգուհի Կարմիր Հրապարակում—նկար	47
26. Ալ Հոկտեմբեր (պոյեմ)—Տ. Ս—յան	50
27. Հեղինակներ, ուսուցիչներ և զեկավարներ Հոկտեմբերյան Հեղափո- խության—Արդահո	51
28. Հոկտեմբերին—խոսք Վազգ. Տալյանի, յերաժշտութ. Վարգ. Տալյանի	53
29. Հոկտեմբերյան Տասնամյակին—խոսք Ա—յանի, յերաժշտություն Ա. Տիգրանյանի	65
	67



Վ. Ի. ԼԵՆԻՆ



1991-53

ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ

Տասը տարի... Բանվորա-գյուղացիական իշխանության, սրբա-
լեալական դիկտատուրայի, հեղափոխական կռվի, սոցիալիստա-
կան շինարարության մի խոշոր տասնամյակ ենք տոնում մենք:

Յես կուգեյի պատմել ձեզ, իմ սիրելի ընթերցողներ, այն մա-
սին, թե ինչ կատարվեց 1917 թվի հոկտեմբերի 25-ին (նոր տո-
մարով նոյեմբերի 9-ին): Դուք գիտեք, թե ինչ է հոկտեմբերյան
հեղափոխությունը, դուք գիտեք, թե ինչպես բանվորներն ու գյու-
ղացիները ձեռք ձգեցին իշխանությունը և ընդմիջաթաղեցին
բուրժուազիայի թագավորությունը:

Դե, լսեք:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները իրենց կյանքով
ու աշխատանքով շատ են նման բոլոր յերկրների բանվորներին ու
գյուղացիներին: Նրանք հարյուրավոր տարիների ընթացքում ըստ-
րուկ էյին դարձել թագավորների, կալվածատերերի ու գործարա-
նատերերի ձեռքին. նրանց շահագործում էյին անվերջ ու ծանր
լծի տակ պահում:

Հողի մեծ մասը պատկանում էր մասնավոր հողատերերին, վո-
րոնց թիվը շատ փոքր էր: Իսկ մի քանի տասնյակ միլիոնավոր
գյուղացիությունը զրկված էր հողից, կամ շատ քիչ հող ուներ և, վոր-
պեսզի քաղցից չմեռներ, ստիպված կամ կապալով էր հողը վերցնում
կալվածատերերից, մեծամեծ կապալավարձ ու տուրքեր վճարելով,
կամ թե մշակություն էր անում շատ չնչին աշխատավարձով:

Նույնպիսի անտանելի վիճակի մեջ էյին և բանվորները: Սը-
րանց ձեռքերով, քրտինքով շինված գործարանները, հարուստ
հանքերը, ճանապարհները պատկանում էյին բուրժուաներին, մաս-
նավոր սեփականատերերին: Բանվորների միակ սեփականությունը
նրանց ույժն էր ու մարմինը, վոր նրանք ծախում էյին մի քանի
կոպեկ ստանալու նպատակով: Այսպես, կիսաքաղց դրություն մեջ,
նրանք աշխատում էյին 14—18 ժամ օրվա ընթացքում, ստեղ-
ծում անագին հարստություններ, իսկ իրենք փոխարենը ստանում
էյին մի քանի կոպեկ, վորը չոր հացին էլ հերիք չէր անում: Յե-

թե սրան ավելացնենք և նրանց կյանքի ուրիշ պայմանները, խո-
նավ ու մութ նկուղները, վորտեղ ապրում էյին նրանք, պատկերը
կլինի լրիվ ու պարզ:

Բանվորների ու գյուղացիների վրին էյին նստած և անագին
թվով ձրիակներ—թագավորական պաշտոնյաները և ծառաները,
վորոնք աշխատանք ասած բանը չգիտեյին և վորոնք վոսկու և
արծաթի մեջ էյին ապրում:

Սակայն ազան բուրժուազիան, դիզելով իր հարստությունները,
միևնույն ժամանակ դողում էր այդ հարստության վրա, թե չլինի
խլեն իրենից: Սրա հետ և չբավարարվելով բանվորի ու գյուղացու
քրտինքով ստեղծած հարստության յուրացումով, բուրժուազիան
միշտ աչք ուներ դրած ուրիշ յերկրների կապիտալի վրա: Այս
նպատակներով բուրժուական, միապետական կառավարությունը
անագին քանակությամբ գորք էր պահում: Այս գորքը պահելու
ամբողջ ծախսը հանում էյին դարձյալ աշխատավոր ժողովրդից:

Ժողովուրդն ասում է. «գող—սիրտը դող»: Հենց այսպես էլ
ապրում էր նախկին Ռուսաստանի բուրժուազիան ու նրա կառա-
վարությունը: Նա միշտ վախում էր այն բանից, վոր մի օր կա-
րող են համբերությունը հատած ու ինքնագիտակցությամբ յեկած
բանվորներն ու գյուղացիները հարձակվել բուրժուազիայի վրա ու
խլել նրանից ամբողջ հարստությունը, գործարանները, հողը, հան-
քերը և այլն: Այս պատճառով կառավարությունը պահում էր
անագին քանակությամբ վոստիկաններ, ժանդարմներ, լրտեսներ,
վորոնք սխտեմատիկորեն լռեցնում էյին ամեն տեսակի դժգոհու-
թյուն և հալածում բանվորներին ու գյուղացիներին:

1905 ԹԻՎԸ

Սակայն այս բոլորը, ծեծն ու հալածանքը, բերդն ու կախա-
ղանը չէր վախեցնում մեր բանվորներին. նրանք հետզհետե ավելի
ու ավելի հեղափոխական էյին դառնում և ձգտում գեպի ազատ
կյանք, մի կյանք, ուր չէր լինի վոչ շահագործում և վոչ շահա-
գործողների իշխանություն:

Այսպիսի ձգտման հետևանքն էր 1905 թվի հեղափոխությունը:
Առաջին անգամ բանվորներն ու գյուղացիները դուրս յեկան, ծա-
ռացան իրենց շահագործողների դեմ: Բանվորները ձգտում էյին
վոչնչացնել մասնավոր սեփականությունը, խլել գործարանները

կապիտալիստների ձեռքից, դարձնել ժողովրդի սեփականություն: Գյուղացիներն ել ուզում էին հողերը առնել կալվածատերերից և, միացած բանվորների հետ, տապալել ցարական իշխանությունը: Սակայն ցարը, բուրժուազիան, հողատերերը կարողացան միացյալ ուժերով, վոստրիկանների ու ժանդարմների միջոցով, հանգցնել այդ հեղափոխությունը «գնդակներ չխնայելով»:

Բանվորներն ու գյուղացիները չկարողացան հասնել իրենց բաղձած ազատությանը: Չնայած նրանք պարտվեցին, սակայն հեղափոխական վոզին չմեռավ նրանց մեջ, այլ, ընդհակառակը, նրանք կրկնապատկված ուժով ու յեռանդով սկսեցին աշխատել միապետության դեմ: Նրանց մեջ փոթորիկը հասունանում էր որեցոր ու մեծանում դժգոհությունը:

ՀԱՄԱԵԽԱՐՀԱՅԻՆ ՍՊԱՆԴԱՆՈՅԸ

Այդ դժգոհությունը աստիճանաբար սկսեց ծավալվել: 1913—14 թվերին նախկին Ռուսաստանի գանազան քաղաքներում սկսվեցին գործադուլներ, վորոնք առաջ էին դառնում միայն բանվորների անտեսական դրությունը բարելավելու պահանջից, այլ և հետապնդում էին քաղաքական նպատակներ (կռիվ միապետության դեմ, բուրժուազիայի լուծի թոթափումը և այլն):

Սակայն համաշխարհային պատերազմը ժամանակավորապես թուլացրեց այդ շարժումը: 1914 թվին սկսվեց իմպերիալիստական պատերազմը: Սրան մասնակցում էին մի շարք իմպերիալիստական պետություններ: Նպատակը գլխավորապես այն էր, վոր իրար թալանեյին, խլեյին իրարից գաղութներ, շուկաներ, հում նյութի աղբյուրներ և այլն: Պարզ է, վոր այս պատերազմն ուղղված էր դարձյալ աշխատավոր ժողովրդի դեմ: Նախ նա պետք է տաներ այդ պատերազմի ամբողջ ծանրությունն իր ուսերի վրա, կտրվեր աշխատանքից, ընտանիքից և ապա պարտված պետության աշխատավորությունը պիտի դառնար հաղթող յերկրի բուրժուազիայի ձեռքին ստրուկ ու շահագործման առարկա:

Նույնպիսի նպատակներ էին դրել իրենց առաջ և նախկին Ռուսաստանի բուրժուազիան ու միապետությունը: Յեվ այս պատճառով նրանք ել մասնակցեցին համաշխարհային այս սպանդանոցին և միացան Ֆրանսիայի ու Անգլիայի իմպերիալիստների հետ:

Բայց Ռուսաստանին շատ թանգ նստեց պատերազմը: Պատե-

րագմի ծախսերն աճում էին որեցոր և ծանր բեռ դառնում բանվորների ու գյուղացիների համար: Զորքի թիվը մեծանում էր ամեն որ, պետք էր ավելի շատ զենք: Ապրուստի նյութերը հետրգհետե թանգանում էին: Հենց պատերազմի առաջին որերից անհրաժեշտ յեղավ մեծ քանակությամբ փող: Ահա թե վորքան ծախսեց նախկին Ռուսաստանը պատերազմի համար:

1914 թվի հուլիսից մինչև 1915 թ. հունվար ամիսը պատերազմի պետքերի համար ծախսվեց 3 միլիարդ ռուբլի: Ընդհանուր առմամբ 5 ամսվա ընթացքում ծախսվեց ամբողջ պետության մի տարվա յեկամուտը: 1915 թվի ռազմական ծախսերը հավասարվում էին 9 միլիարդի, 1916 թ.—12 միլիարդի, իսկ 1917 թ.—25 միլիարդի, իսկ այս բոլոր տարիների ընթացքում ծախսվեց 50 միլիարդ ռուբլի:

Յեթե մենք Ռուսաստանի հարստությունը վերածենք զրամի, հավասար կլինի 70 միլիարդ ռուբլու, ուրեմն Ռուսաստանին պատերազմը նստեց նրա ամբողջ հարստության $\frac{3}{4}$ մասը:

Այսպիսով այն դրամը, վորով կարելի էր ամբողջ յերկիրը ծաղկեցնել ու բարգավաճել, ծախսվեց աշխատավոր մասսաների արյունհեղություն ու յեղած անտեսություն քայքայման վրա:

Պակասեցին աշխատավոր ձեռքերը, պակասեց և աշխատավոր ընտանիքի յեկամուտը, թանգությունը հասավ ամենաբարձր աստիճանին:

Միևնույն ժամանակ ընկավ և գյուղատնտեսությունը: Այս բանը զգալի էր ավելի աղքատ գյուղացիության, քան թե հարուստ գաւի համար:

Պատերազմն ունեցավ իր ազդեցությունը և դասակարգային կռիվ վրա: Հարաբերությունը բանվոր դասակարգի ու բուրժուազիայի և նրա կառավարության միջև քանի գնում, այնքան լարվում էր: Այս բանին շատ նպաստեց այն հանգամանքը, վոր պատերազմի ծախսերը ծածկելու համար բուրժուազիան ձգտում էր բարձրացնել արտադրությունը ի հաշիվ բանվորության, մեծացնելով բանվորական որը և իջեցնելով աշխատավարձը: Բանվորական ուժի պակասը ծածկելու նպատակով սկսվեց կանանց և յերեխաների անսահման շահագործումը: Հետգհետե վոչնչանում էին այն կանոնները, վորոնք պաշտպանում էին բանվորների առողջությունն ու բարեկեցությունը: Կռիվը կապիտալի ու աշխատանքի միջև սաստկանում

եր որեցոր: Բուրժուազիայի դեմ կռիւնքը բանվորների միակ զենքը գործադուլն էր, վորը աճում էր աստիճանաբար:

Յեւրոպական պրոլետարիատը, խաբված իր դեկավարներից անցավ բուրժուազիայի կողմը: Այլ և այլ յերկրների սոցիալիստները կոչ արին բանվորներին պաշտպանելու իրենց յերկիրը (բուրժուական հասարակութունը): Նույն կերպ վարվեցին և հախկին Ռուսաստանի մենշեիկները: Միայն բոլշեիկներն էին, վոր ընկ. Լենինի դեկավարութեամբ սկսեցին դատապարտել համաշխարհային պատերազմը և կոչ արին բանվորներին քաղաքացիական կռիւ հայտարարել բուրժուազիային:

1917 ԹԻՎԸ

(Փետրվարից մինչև մայիս)

Այսպիսով պատերազմը, բացի աղքատութունից ու տանջանքից, վոչինչ չբերեց բանվորութեանն ու աշխատավոր գյուղացիութեանը: Սակայն մյուս կողմը կանգնած բուրժուազիան, պատերազմի շնորհիւ մեծամեծ հարստութեաններ գիգելով, իր կյանքն անց էր կացնում քեֆի և ուրախութեան մեջ: Այս դրութիւնը շարունակվում էր ամբողջ յերեք տարի: Աշխատավոր մասսաները այլևս չկարողացան տանել այս դրութիւնը, և 1917 թվին, փետրվարի 24-ին լավեց հեղափոխութեան վորտոր:

Հեղափոխութիւնը բանվորների ու գյուղացիների ընդհանուր ջանքերով հաղթանակեց: Տապալվեց ընդմիշտ միապետութիւնը փետրվարի 27-ին:

Հեղափոխութեան հաղթանակից հետո, անմիջապես հարց դրվեց կառավարութիւն կազմելու մասին:

Պետրոգրադում (Լենինգրադում) փետրվարի 27-ին կազմվեց Բանվորների ու Զինվորների Խորհուրդ: Սակայն բուրժուազիան քնած չէր. նա չէր կարող իր իրավունքից ու ազդեցութեանից հրաժարվել, ուստի պետական խորհրդի անդամները (մեծ մասամբ բուրժուազիայի ու կալվածատերերի ներկայացուցիչները) կազմեցին պետական խորհրդի ժամանակավոր կոմիտե: Այսպիսով հեղափոխութեան հենց առաջին օրերից իրար դեմ կանգնեցին յերկու իշխանութիւններ՝ միանգամայն տարբեր սոցիալական կազմով: Հենց սկզբից բանվորներն ու գյուղացիները կարող էին ամբողջ իշխանութիւնն առնել իրենց ձեռքը, բայց մենշեիկներն ու սոցիա-

լիստ հեղափոխականները հենց սկզբից հրաժարվեցին հեղափոխական իշխանութիւնն ստեղծելուց և թույլ տվին, վոր բուրժուազիան կազմի իր իշխանութիւնը:

Այսպիսով փետրվարյան հեղափոխութեան օրերին հանդես յեկավ յերեք ուղղութիւն:

Ուժերի այսպիսի լարումը պարզ է, վոր վերջի վերջո պիտի վերջանար մի կողմի պարտութեամբ: Յեւ անհոկոսներ յերջին հեղափոխական մասսաները կամաց-կամաց անցնում են բոլշեիկների կողմը: Այսպիսով բոլշեիկները կարողանում են թե խորհուրդներում և թե մյուս բանվորական ու զինվորական կազմակերպութիւններում մեծամասնութիւն շահել: Յեթե մենք համեմատենք Բանվորա-Զինվորական Խորհուրդների Լ-րդ համագումարը III-ի հետ, պարզ կլինի այն փոփոխութիւնը, վոր տեղի ունեցավ մասսաների մեջ:

	II համագումար		III համագումար	
	Բանվորներ	Զինվորներ	Բանվորներ	Զինվորներ
Մենշեիկներ	120	90	72	4
Սոցիալիստ-հեղ	50	260	43	60
Անկուսակցականներ . .	—	—	34	—
Բոլշեիկներ	40	50	164	156

Այսպիսով մի կողմից բուրժուական ժամանակավոր կառավարութեան միապետական, հակահեղափոխական ձգտումները, մյուս կողմից մենշեիկ-եսերների դիմակավոր քաղաքականութիւնը և անհորժութիւնը մասսաներին բերին այն մտքին, վոր պետք է իշխանութիւնը հանձնել խորհուրդներին և ապա հոկտեմբերի 24-ի գիշերը Պետրոգրադի (Լենինգրադի) բանվորներն ու զինվորները ձեռք ձգեցին հեռախոսային ցանցն ու հեռագրատունը:

Հոկտեմբերի 25-ին (հին տոմարով նոյեմբերի 8-ին) իշխանութիւնն արդեն ամբողջովին, առանց արյունահեղութեան, անցել էր բանվորների ու գյուղացիների ձեռքը:

Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր

Հոկտեմբերյան հեղաշրջումը դարձավ անջնջելի պատմական փաստ, իսկ Ռուսաստանը բանվորա-գյուղացիական յերկիր:

Հոկտեմբերի 26-ին, հաղթանակից հետո, հավաքվեց բանվորների ու գյուղացիների բախտը վորոշող խորհուրդների Համառուսական յերկրորդ Համագումարը: Նշանակալից է այս Համագումարը նրա-նով, վոր մի կողմից պարզեց մասսաների տրամադրությունը, իսկ մյուս կողմից՝ իր վորոշումներով ամրապնդեց Հոկտեմբերյան հաղ-թանակը: Առաջին խնդիրը, վոր ախքան հուղում էր աշխատավոր մասսաներին, դա հաշտության խնդիրն էր: Հաշտության ղեկըտնե-րին հաջորդեց ղեկըտնող հողի մասին, վորով ծրագրվում էր հողը տալ աշխատավոր գյուղացիությանը: Բավարարելով գյուղացիու-թյան պատմական պահանջները, Համագումարը չմոռացավ մի ղեկ-ըտնով ապահովել և բանվորների իրավունքները արդյունաբերու-թյան մեջ (բանվորական կոնտրոլ): Այս բոլորը ձեռնարկելու և ա-վելի հաստատուն դարձնելու համար Համագումարն ընդունեց ժո-ղովրդի իրավունքների ղեկարացիան, վորով հայտարարվում էր պրոլետարիատի ղեկատուութեամբ, բանվորա-գյուղացիական իշխանու-թյուն:

Այս Համագումարն էր, վոր հաստատեց նաև ժողովրդական կո-միսարների առաջին խորհրդի կազմը ընկ. Լենինի նախագահութեամբ:


Սակայն պարտված բուրժուազիան չէր կարող հաշտ աչքով նայել այս բոլորին, և ահա նա հավաքում է բոլոր հակահեղափոխա-կան ուժերը և մենշևիկներն ու եսերների ոգնութեամբ կազմա-կերպում բանդաներ խորհրդային իշխանության ղեմ: Մյուս կողմից յեվրոպական կապիտալիստները, վորոնք մեծ հույսեր ունեյին Ռուսաստանի վրա համաշխարհային պատերազմում, բայց քանի վոր խորհրդային Ռուսաստանը հրաժարվեց շարունակել սպանդանոցը, նրանք իրենց գործերը ուղղեցին խորհրդային իշխանության ղեմ: Այսպիսով կազմվեց ներքին և արտաքին հակահեղափոխական մի բա-նակ, վորի ղեմ խորհրդային իշխանությունը պետք է լարեր իր ու-ժերը: Սկսվում է Հ. Ռուսաստանի զանազան մասերում քաղաքա-ցիական կռիվը նոր բանվորա-գյուղացիական իշխանության, մաս-սաների և պարտված բուրժուազիայի ու ցարական ղեներալների միջև: Չափազանց ծանր էր այդ կռիվը խորհրդային իշխանության

համար: Յերեք տարի տեղ այդ կռիվները քայքայեցին առանց այն ել պատերազմից ու հեղափոխությունից ուժասպառ յեղած յերկիրը: Սակայն, չնայած թշնամու բանակի առավելություններին, մեր պրոլետարիատը հաղթող դուրս յեկավ:

Դուրս քշելով ստար ու ներքին հակահեղափոխականներին յեր-կրի սահմաններից, խորհրդային իշխանությունը անցավ շինարա-րական աշխատանքներին: 1921 թվից, նոր տնտեսական քաղաքա-կանության շնորհիվ, վերականգնվում է ավերված ու քայքայված արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Բանվորական մասսաները, աղքատ ու միջին գյուղացիությունը ձեռք են ղարկում քանդվածը վերանորոգելուն: Սակայն շինարարական աշխատանքը կանգ չի առնում այստեղ: Վերաշինության հետևում է և առաջխա-ղացում: Նոր գործարաններ են բացվում, գյուղացիությունը սկսում է իր աշխատանքները յենթարկել տեխնիքական փոփոխու-թյունների, բացվում են նոր ճանապարհներ և ղարկ է ստանում ե-լեկտրիֆիկացիան: Գործադրկությունը վերանում է աստիճանաբար: Հին բանվորական շարքերը աճում են հետզհետե: Մեր յերկիրը ըս-կըսում է ծաղկել, ամրանալ տնտեսապես: Յեվրոպական կապիտա-լիստական յերկրները տեսնելով մեր հաղթանակը տնտեսական բնա-ղավառում, աշխատում են ճանաչել խորհրդային իշխանությունը, վիզը ծուկ միակ բանվորական յերկրի առջև և հարաբերություն սկսել նրա հետ:

Այս ծաղկման պրոցեսը շարունակվում է և այսօր: Սակայն միջազգային բուրժուազիան, վորը մեծ հույսեր էր դրել Հոկտեմբե-րյան հեղափոխության տապալման վրա, տեսնելով մեր ամրապն-դումը մի կողմից, մյուս կողմից վտանգ ղգալով խորհրդային հե-ղափոխական պետության գոյությունից, սկսում է մի ուժեղ հա-լածանք խորհրդային իշխանության ղեմ: Սակայն քաղաքացիական կռիվի բովից անցած մեր պրոլետարիատը լավ է ճանաչում իր թըշ-նամիների ուժը. նա չթուլացնելով իր շինարարական աշխատանքը՝ միևնույն ժամանակ պատրաստվում է ղիմաղրելու իր դասակար-գային թշնամի իմպերիալիստական պետություններին:

Բանվորների ու գյուղացիների ջանքերով ու արյունով ծնված Հոկտեմբերը գեռ կապրի յերկար, ուղղելով իր յերթը ղեպի հա-մաշխարհային Հոկտեմբեր:



ԸՆԿ. ՍՏԱԼԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ 10-ՐԴ ՏԱՐԵԳԱՐՁԻՆ

Մեծ առն ե այսոր՝ նորոգված կյանքի,
Տասներորդ տարվա վե՛հ տարեգարձի,
Վոր ամեն կողմից բանվոր-գյուղացիք
Դիմում են հանդես՝ շարքով գեղեցիկ:

Ահա և գործը, գրոշը պարգած,
Առաջ ե գնում կարգով գերազանց,
Յեվ առույգ տեսքը կարմիր բանակի
Նշան ե անվերջ մեր հաղթանակի:

Ահա և մեր նոր սերունդը կայտառ,
Դպրոցից յելած շարքերով անծայր,
Կարմիր կարգերի նշանը կրժքին՝
Դիմում ե հանդես ժպիտը դեմքին:

Յեվ գյուղ ու քաղաք պատշաճավորին
Կարմիր են հագել՝ զարդերը կրժքին,
Յեվ ժապավենյա կանաչ-կարմիրով
Կամարներ կապել նոր կյանքի սիրով:

Յեվ ամենուրեք մեր նոր աշխարհում
Ազատ կարգերի նվագն ե հնչում,
Յեվ ամեն կողմից անթիվ շարքերով
Դիմում են հանդես ուրախ դեմքերով:

Պ. Գրիգորյան

Բաթում

ՈՐԲԱՆՈՎԻՉ

ԳՈՐԾԱՐԱՆԸ

I

Նա կես տարի մնաց միշտ լուռ,
 Յեվ բեռնե պատերը հաղթ
 Տեսնում եյին, ինչպես իզուր
 Ժանգն եր ուտում յերկաթը հաստ:
 Նա որերի մշուշներում
 Տարորինակ ձայն եր լսում...
 Հոկտեմբերի ուժեղ, զնգուն,
 Վե՛հ քայլվածքն եր հրապարակում:
 Յեվ որերը շարան-շարան
 Անցնում եյին, թռչում մեկ-մեկ,
 Այդ որերին—խոնավ աշնան
 Յեվ հին կյանքն եր կորչում անհետ:
 Լռությունը գործարանի,
 Մեքենայի ներքը յերկար
 Խանդարում եր պահապանի
 Յերգը տխուր, յերգը անծայր...
 Յուրա ձմռանն ել նա լուռ մնաց,
 Միայն բուքը շարածճի
 Ըշտապ պոկեց պատերից թաց
 Հրամանները զինվորկոմի:
 Այսպես մռայլ և մտազբաղ,
 Անխոս ու լուռ կանգնած եր նա.
 Նրա գազգահի շուրջը անհաղթ
 Վոստալյն հյուսեց սարդը հիմա:

II

Բայց զարնանը, մի որ հանկարծ
 Կապանքները նա դեն ձգեց,
 Յեվ մեքենան ուրախ սուրաց,
 Հաղթանակով առաջ վազեց:
 Նա կես տարի քաղցած, անուժ,
 Աշխատանքի մնաց կարոտ,
 Հիմա հանկարծ մոտորը զգուշ
 Զվարթ աղմկեց, թնդաց սրտոտ:
 Յեվ կտրատող սրղոցի տակ
 Կրակե ուլտեր փայլվեցին,
 Յեվ ձեռքերը հաղթ ու արագ
 Այն դարձեցին ու կոկեցին:
 Ու դողացին գործարանի
 Կամարները յերկաթածույլ-
 Այնտեղ իշխեց այդ որվանից
 Աշխատանքը յեռուն անգուլ:
 Յեվ մոտորներ, փուքս ու սրղոց
 Մի ընդհանուր յերգ են կանչում,
 Վոր որերն այս կրակ ու բոց
 Նրանց կյանք տվին, ույժ անդադրում:
 Գործարանը, լի ծփանքով,
 Տեր եր նորից հրապարակում.
 Նա, պաշտպանված հասա բեռնով,
 Նոր որին եր ուրախ ժպտում:
 Յեվ ազատված շղթաներից,
 Իր անցյալն է այրում թեթև...
 Ինքն է իշխում, փայլում նորից,
 Ինչպես զարնան հպարտ արև:

Թարգմ. ուսու. Հո. Պող.

ՎՈՂՉՈՂՆ ԲԵՂ, ԿՅԱՆՔ

(Ռուսերենից)

Վողջո՛ղն քեզ, կյանք.

Քեզ ենք գալիս

Մեր բախարը դարբնելու.

Մնվում ենք Հովտեմբեր-Մայիսով

Տաքացած պայքարում վառ հույսով:

Նետենք վեր

Ցայտ խոտքեր՝

Պիոներ,

Պատրաստ կաց...

— Ե՛յ, արև վորսողներ...

Դուք ո՞վ եք.

Կըտենենք դուք դաժան, նեղիւրեր...

— Մենք պատրաստ ենք,

Պիոներներ ենք...

Վողջո՛ղն քեզ, կյանք.

Դու ըզգաստ բարեկիր

Ապագա կոմանդիր քաջերին.

Բերել ենք մեր սրտում հայրերից

Ժառանգած քաջ վոգին:

Նետենք վեր

Ցայտ խոտքեր՝

Պիոներ,

Պատրաստ կաց...

— Ե՛յ, արև վորսողներ...

Կըտենենք դժնդակ նեղ ուրեր...

Պատրաստ եք:

— Պատրաստ ենք:

Վողջո՛ղն քեզ, կյանք.

Յեռում են ույժերը մեր հզոր.

Հսկում ես, ծնվում ե կյանքը նոր...

Իզուր չե մեր սրտի ավյունը,

Յեռացող կոմսոմոլ արյունը:

Նետենք վեր

Ցայտ խոտքեր՝

Պիոներ,

Պատրաստ կաց:

— Խորհուրդդ տեղերից,

Նոր ձգված ուղիներից

Ցած բերել աշխարհը

Պատրաստ եք...

— Պատրաստ ենք:

Վողջո՛ղն քեզ, կյանք.

Քո մեջ ենք վոտք դնում...

Սարսևի չենք, սարսևի չենք, սարսևի չենք.

Մնվում ենք Հովտեմբեր-Մայիսով

Տաքացած կովի մեջ վառ հույսով:

Նետենք վեր

Ցայտ խոտքեր՝

Պիոներ,

Պատրաստ կաց:

Ե՛յ, արև վորսողներ...

Ո՞վ եք դուք.

Թափելու ձեր համառ դուք ճիգեր

Պատրաստ եք...

— Մենք պատրաստ ենք,

Պիոներ ենք:

ՊԼՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԻՎԸ

(Ռուսերենից)

Ամբոխը զոհ էր շանթող լարերի,
Վոր սև թերթերը իրենց հեռ բերին.
Յեվ ջրհորի մոտ ծեր կանայք հուզված՝
Մեղքերն են քավում լացով «առ առված»:

Մին ճառեր հողի և հացի մասին,
Թե ում ընտրեցին հեռու՝ Պիտերում,
Իսկ արևն—ինչպես մի կարագ,
Անլուր սահում էր դեպի արևմուտ:

Հանելուկային և խորաթափանց նրբանց աչքերում
Բազմն իր քմահաճ սարսափն էր ծնում.
Խավար արևի մշուշն էր թառել նրանց մըտքերին,—
Վոչ իրենց ելին հավատում արդեն և վոչ ընկերին:

«Ո՛ր, բավական է մեր կյանքը մատնեք սև փորձանքներին,
Հերիք ե, ինչքան ահ ու սարսափով մեր սիրտն այրեցին...»:
Բայց... այդ կանչերը անգոր են սրբել են անցյալը սև.
Ո՛ր, նա յերբեմն պարզ գալարվում է մեր ուսի յետև:

Յեվ մերթ մթադնում, մերթ առկայծում են աչքերը նրբանց՝
Դեպի Մոսկվան ու դեպի Պիտերը հույսերով լրցված.
Այնտեղ պատմության անիվը շրջող հանճարեղ Լենին
Իր հուր խոտքերն էր փորագրում, այնտեղ մեխում նրա ճակարին:

Դիսակ

ՏԱՍԸ ՏԱՐԻ

Հեյ, հեռու ափերի, լայնարձակ տափերի
Հալածված յեղբայրներ քաջարի,
Մեր սիրտը, մեր միտքը, մեր հոգին ձեզ համար
Կիզել ենք տաս տարի, տաս տարի...

Լավերի առնջուղին, հենգամիտ վոսոխին
Կանչել ենք արյունոտ պայքարի,
Ավերում, ցավերում, վաղերում անսահման
Կռվել ենք տաս տարի, տաս տարի...

Աշխարհի կողմերին, մահաբեր հոգմերին
Մենք կուրծք ու ճակատ ենք տվել.
Մեր սիրտը առնական, մեր յերթը հաղթական,
Կանգուն և հաստատ ել ավել...

Կանչել ենք ամենքին, ում հոգին դառնազին
Որերի մրրուրն է ճաշակել,
Կռվել ենք միասին, ձգտել ենք նոր լույսին,
Դիրքերից վոչ մեկը չենք լքել...

Կարգերը հնամյա փշրել ենք մենք հիմա,
Զնջել ենք հեռքերը անցյալի,
Կիզվել ենք արևից, ծարավից ու սովից,
Յանել ենք սերմերը նոր կյանքի...

Տաս տարի պարծանքի, տաս տարի հրճվանքի,
Տաս տարի խնդության ու վարդի,
Տաս տարի պայքարի, տաս տարի լավ ուրի,
Տաս տարի հաղթական մի յերթի...

Գեորգ-Գրիգ

1991-53



ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ը

Որեր կան վեհ, դարերի պես...
 Զընգան, յերգ իմ, ու առկայծիր...
 Այս ուշ աշնան ուրը, կարծես,
 Արշալույս ե ջինջ, հրածին:

Հին ուրերը թույլ, խարխափող,
 Գընացին, կորան մառախուղում.
 Այս նոր ուրը, վստահ քայլող,
 Յեղավ հաղթող ալ բոցերում:

Զի մոռանա սերունդը նոր
 Սմոլնին, ինչպես բզեզի փեթակ,
 Վառ խոտերը այն անսովոր
 Յեվ այն քաջին կանգնած պահակ:

Ամեն մեկը բարձր եր գլխով,
 Ամեն մեկը հաղթ եր, ուժեղ...
 Յեվ ասողերն ել յերկնքում գով
 Յերգում եյին, ժպտում այնանդ:

Յեվ բոլորը հովնած, անքուն
 Արշալույսից մինչ արշալույս...
 Բայց քայլվածքը նոր եր, զընգուն,
 Իսկ սրտերում դարուն ու լույս:

Թարգմ. ուսու. Հ. Պ.

Ս Մ Ո Ն Ն Ո Ւ Մ

I

Սմոլնին ահաբեկ աչքերն ե չրուել
 Իր բաղմահադար շքեղ լամպերի,
 Մի անբավական ժրպիտ ե թառել
 Իշխանաց տոհմի «հերոս» դեմքերին:

Մարդկանց քառան ե—ինչպես մի ովկիան—
 Ծփում պալատի անթիվ անցքերում,
 Մատրոս-պահակն ել հայացքով անթարթ
 Քարացած կանգնել—նրբանց ե նայում:

Ու մեկն ել տեսքով ջախջախված, սմբած
 Կրթնել պալատի մրույլ լուսանցքին,
 Թնդանոթների գրբոհով տարված՝
 Վորսում շառաչը համազարկների:

Մարդկային հրսկա ծովն ալեկոծող
 Իրեն պողպատե, կրակոտ հայացքով
 Ահա նա—կերտողն ապագա դրախտի—
 Նա—առաջնորդը համամարդկային,

Գրանիտե պայծառ և միշտ հաստատուն,
 Դեռ յերեկ միայն աքսորված Լենին—
 Ինչպես նավավար փոթորկվող ծովում,
 Դանդաղ քայլում ե, կանգնում արիքունին:

II

Լուռ, հոկանմբերյան գիշեր ե չորս դին,
 Խավարն ե իջել պատուհաններին,

Բայց Սմոլնին բոցոտ, Սմոլնին վրդովված՝
Հետևե՛ք, ճշում սաստիկ կատաղած:

Դուք կատաղի քամուն դեմ արած
«Ավրորա» նավից յետ յեկավ կրկին,
Շտապում ե՛ք դեպի Նեան կատաղած
Այն սուրհանդակը հրամանը ձեռքին:

Լուսամուտի տակ խռպոտ սնդոցով
Ծեր բրոնհիլը յերախն ե՛ր ցցել,
Ըստառնում ե՛ք դեռ հոգնած փնջոցով,
Բայց զուր են նրբա այդ խուլ հեռոցներ:

Արդեն բազմաթիվ հեռագրաթերեր
Թոցնում են հեռու յերջանիկ լուրեր.—
«Այսօր փոթորկի ե՛կ կրրակի մեջ
Պայծառ ու կարմիր կոմսունան ծընվեց»:

Դիտակ

ԿԱՐՄԻՐ ԳԻՐԳԸ

Իմ կարմիր գիրք, գիրք իմ խոսուն՝
Գրված սրտի արյունով,
Քո թերթերից հետո են խոսում
Անցած օրերն արյունոտ:
Ի՞նչ պայքարներ հերոսական
Ինձ պատմում ես դու մաս-մաս,
Պայքար, վորում հայրս ընկավ՝
Հաղթանակին դեռ անհաս:
Ի՞նչ հերոսներ արի անուն
Հորս նման գիրքերում
Տվին իրենց կյանքն ու արյուն,
Անմահացան գրքերում:
Նրանց մասին այսպես կարդում,
Հինը բռնած նշանի,
Յես տալիս եմ խոստում, յերդում՝
Լինել ժառանգ արժանի:
Կարմիր գիրք իմ, գիրք իմ խոսուն՝
Դարձած արյուն ու մարմին,
Քո թերթերից հետո ե՛կ խոսում
Հորս պատգամը կարմիր:

Վաղարշակ Նալեկ

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Գալիք դարերի խոհուն մարգարե,
Թեաւոր մաքի բոցավառ տիտան,
Հուր կանչ նեաեցիր աշխարհովը մեկ.
— Վողջ յերկրների ճնշվածներ, յեկեք...

Կապիտալ հրեշին չարանենդ, դաժան
Մահու թուլին տվիր դու, մեծ իմաստուն,
Յերբ հին աշխարհը տնքում եր անձայն
Գալիք որերի յերկունքով լեցուն...

Կայծակի նման ամպերը խոցող,
Խափարը հաղթող արևի նման
Ուսմունքը քո մեծ, գրավիչ, կանչող
Վառեց մեր հոգում փարոս փրկության...

Ու ցնորքներդ—թռչնակներ կարմիր—
Հրճվանքի շնչով աշխարհով անցան
Յեւ նրանց հանդեպ, վորպես արշալույս,
Պայքարի բոցերն յերկինք բարձրացան...

Բարրիկադներում—կռվում Մոսկվայի
Քո մեծ հոգին չէր սավառնում հզոր,
Պարիզ... Կոմունա... Կարմիր Պետրոգրադ—
Վորքան սրտեր եր վառում ալ-բոսոր...

Գալիք դարերի դու մեծ մարգարե,
Հզոր հրվանդան, բոցավառ տիտան,
Հուր կանչ նեաեցիր աշխարհովը մեկ.
— Վողջ յերկրների բանվորներ, յեկեք...

Թարգմ. ուսերենից Գ. Գ.

ԶՆԳԱ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐ

Զնգա, Հոկտեմբեր, լազուր ձյուններից լալ բյուրեղներով,
Թող քո դրոշներից սոսյունը յերգի ամեն սրտի մեջ,—
Անցյալում թողած մեր սև ու դաժան հուշերից հեռո,
Մենք պետք է տոնենք մեր տոնը այսօր ուրախ ու անվերջ...

Փթթել են այսօր ամենի հոգում մեխակներ, կակաչ,
Կոները ամեն դարձել են այսօր յերկաթ ու գրանիտ.
Վորպես պահապան արև որերի դռների առաջ,
Կանգնած Հոկտեմբեր—դեմքը հրեղեն ու հուրհուրալի:

Պայքարն ու քրտինք մեզնից անբաժան, ուր ել վոր գնանք,
Զույգ քույրերի պես այրող չողերից դեմքերն արևառ
Կանգնում են ուժեղ աշխարհքովը մին—ձայները պողպատ՝
Նոր որերի մասին, նոր ուրախության, վճիռ ու պայծառ:

Ո՛վ վոր վերստին կհիշի մեկ ել անցյալը այսօր՝
Կփարվի քնքուշ նա իր սիրելուն վառ գգվանքների.
Վորքան կյանք տարավ գիշերը խավար, համը ու ահավոր,
Վորքան վառ ույժեր խից մեզանից ճնշումն անցյալի:

Զնգա, Հոկտեմբեր, զմրուխտ ձյուններից լալ բյուրեղներով,
Թող քո դրոշներից սոսյունը յերգի ամեն սրտի մեջ,—
Անցյալում թողած մեր սև ու դաժան հուշերից հեռո
Մենք պետք է տոնենք մեր տոնը այսօր ուրախ ու անվերջ:

Թարգմ. ուսերենից Գ. Մխայան

ԱՊԱԳԱՅԻՆ

Յես լսեցի յերգերը ալ գալիք հզոր դարերի
Քաղաքներում հսկայական, զընդող կանչում հողմերի:
Յես լսեցի յերգերը հաղթ գալիք վոսկե նոր որվան
Գործարանի զիլ շառաչում, ուր փոկերն են խշշում լայն:
Յերբ յես տեսա ընկերոջս, վոր ալ պողպատն եր դարբնում,
Յես ապագա արշալույսի դեմքը տեսա վառ, փայլուն...
Յե՛վ հասկացա, վոր իմաստը վողջ աշխարհի ու կյանքի
Յերկաթաձույլ մուրճի մեջն է, ուժեղ դարբնող հաղթ բազկի:
Վորքան ուժգին խփի շուրջը, դարբնի մուրճը այն զընդուն,
Այնքան ավել մեծ կլինի ուրախությունը փայլուն.
Վորքան ճարպիկ շարժվեն փոկեր, մեքենաներ ու սրղոց,
Այնքան ավել ջինջ կըլինի մեր ապագան վոսկեզոծ...
Այս յերգերը ինձ յերգեցին միլիոնավոր զվարթ ձայներ,
Միլիոնավոր կապտաբաճկոն, ուժեղ, խրոխտ դարբիններ:
Այս յերգերը կանչն են հուզող, միշտ զողանջող նոր կյանքի,
Վոր հաղթել է հին որերը, այն որերը զըրկանքի.
Այս յերգերը կանչն են հզոր գեպի արևը այն վառ,
Դեպի նոր կյանք, յեղբայրություն, ազատություն և պայքար:

Թարգմ. Հո. Պող.

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՆՎԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Ձան, այ մանուկներ, ձեր ջանին մեռնեմ,
Իմ ծեր որերի լույս թիթեռնիկեր.
Ձեր անմեղ ժպտով հողիս եք լցրել,
Սիրուն թռչնիկներ, կըլպտան բալեք:

Հոկտեմբերական մեր լեն աշխարհում
Զորացեք ագնիվ պիոների պես,
Կյանքի լքումից փախեք միշտ հեռու,
Հպարտ մարտիկներ կյանքում տեսնեմ ձեզ:

Կյանքի խողկան անեղ կովի մեջ
Հեղափոխական յեղեք դուք զինվոր
Ու կեղծիքի գեմ պայքարեք անվերջ —
Հաղթության դափնին ձերն է մի որ:

Ու ծեր ուսուցչի կնճիռների տակ
Կը փայլի հպարտ ժպտան հաղթության,
Տեսնելով ձեր մեջ վեհ գործիչ շիտակ,
Յերգիչ հաղթ բազկի և ազատության:

Դիսակ

Հ Ո Վ Տ Ե Մ Բ Ե Ր

Հաղթ շարքերով, հաղթ յերգերով առնական
Վոտքի յեւով բանակն ըմբոստ բանվորի,
Շողաց միաքը, շողաց սուրը հաղթական
Ու պատըռտեց վարագույրը խավարի...

Դէ՛հ, վորոտա, ահագորդ, Հոկտեմբեր,
Գոռ ահագանդ դու անդադրում զողանջի.
Մահ ու կորուստ դահիճներին արնակեր,
Հասավ ժամը դառն ու դաժան վրեժի...

Եսոր բոսոր արշալույս ե հրաշոգթ,
Վերջ քսության, ստրկության ու բանտի.
Եսոր յերկրում վառման դրախտ ու դժոխք—
Կորչի ցավը, կորչի դավը արմարդի...

Հէ՛յ, սրիկա, սնահոգի դահիճներ,
Հասեք, ուսեք Գողգոթայի խաչը ձեր
Ու սարսափով աեսեք, բարրուկն յերեկվա
Շաղ ե տալիս արնավրեժ ծաղիկներ...

Եսոր յերեւ, մահման վեճի յեն մտել,
Սուրը մեխել դահճի սրտին վոխակալ.
Եսոր հպարտ ե՛ միակամ ե՛ ուժգին
Յերգում են հաղթ Միջագոյսին յերգը ալ:

Թարգմ. ուսուցիչից Գեվորգ

Ն Ա Ն Ն Ո Ւ Թ Ո Ռ Ը

Ն ա ն ը.

— Ես ի՞նչ բան ե, բալա ջան,
Քուռն յերազ ե շողշողուն.
Նրա վրա առաջվան
Իշխանները չեն լողում:
Լույս չէր տեսնում իր կյանքում,
Լուռ տանում եր իր ջուրը,
Թափում անկուշտ Կասպիքում:
Միայն առնին ցարերի
Նա լինում եր լուսավոր,
Նավակներով մեծերի
Չարգարվում եր փառավոր:
Նրանց ահից չէր անցնում
Բանվոր նստած լաստերին.
Խեղճ ձկնորսն ել չէր անում
Իրեն վորսը ափերին:
Ես ի՞նչ բան ե, բալա ջան,
Քուռն յերազ ե շողշողուն.
Նրա վրա առաջվան
Իշխանները չեն լողում:

Թ ո ո ը.

— Չարթիր, գարթիր, նանի ջան,
Եզ հին մույլ յերազից.
Այժմ գործն ե քրանաջան
Լողում Քուռի յերեսից:
Տես, գիժ Քուռի հոտանքը
Կանգ ե առել, ծովացել,
Իշխանների հորձանքը
Աշխատանքով վերացել:
Տես, բանվորն ու գյուղացին
Կառուցել են Չագեւը,
Բյուր աստղերով նորածին
Չարգարել են հանգեսը:

Տես, շինում են մեր յերկրում
Ռիոնգես ու Չագեւներ,
Հիմք են դնում ձորերում
Հայաստանի Չորգեւներ:
Տես, շինել են Շիրկանալ,
Շինելու յեն Արաքսի,
Ալագանի ալլ ե ալլ
Կանալները չեն պակսի:
Մուրճ ու մանգաղ նոր լույսով,
Նոր կուլտուրան փառավոր
Նոր աշխարհի նոր հույսով
Դեռ կոփում են գորավոր.
Դեռ կոփում են ու առնում
Տասնամյակը Խորհրդի,
Տասնյակների շարանում
Մեծ տոն կգա քրախիքի,
Յերբ կառնենք միաձուլ
Մեծ անկումը բուռնցքի,
Տասնյակներով ամրակուռ
Հոկտեմբերներ նոր կյանքի:
Մեր շինարար ամեն ջանք
Դեռ գնալով պիտ աճի,
Մինչեւ աշխարհ բովանդակ
Հոկտեմբերը ճանաչի...

Ն ա ն ը.

— Բայց ի՞նչ բան ե Հոկտեմբերը,
Ի՞նչ հրաշք ե, բալա ջան,
Ի՞նչ հզոր են են ձեռքերը,
Վոր սահղծել են եզքան բան:

Թ ո ո ը.

— Ծանրացել եր, հասել յերկին
Խեղճի քաշած տառապանքը.
Հին դարերի խոցը կրծքին՝

Միշտ գերի յեր աշխատանքը:
 Մի ուր յելան քափ-քրտինքում
 Խեղճ բանվորն ու գյուղացին,
 Մուրճի տեղ սուրը ձեռքին
 Տերերի դեմ գնացին...
 Հոկտեմբերն եր կովի ուրը,
 Հոկտեմբերը փոթորիկ.
 Խառնվել եր հինն ու նորը
 Բարձրացել եր հուր ալիք,
 Են շիկացած կովի բոցը
 Ծփծփում եր Ռուս ծովում,
 Մինչև հաղթեց նորի կոշը
 Հոկտեմբերյան մեծ կովում:
 Հոկտեմբերը միաբան
 Յրեց զորքերը ցարի,
 Հիմքը դրեց անտատան
 Խորհրդային աշխարհի:
 Կարմիր աստղը հրաժին
 Լույս և տալիս, զարդարում,
 Խեղճ բանվորն ու գյուղացին
 Ել չեն տանջվում խավարում:
 Հոկտեմբերը, նանի ջան,
 Ազիզ ուրն և թշվառի,
 Հոկտեմբերը քրտնաջան
 Հիմքն և մեր նոր աշխարհի—
 Վորտեղ չկա ցար ու գան,
 Ազատ ամենքն են շրնչում.
 Վորտեղ բուռնցքը ազան
 Ել թուլերին չի ճնշում.
 Վորտեղ կռիվ—ան չկա,
 Միշտ զալար և, միշտ զարուն.
 Վորտեղ մարդիկ անզգա
 Ել չեն վախում զուր արյուն...

Ն ա ն ը.

— Հիմա, վոր յես հասկացա
 Ու պարզ տեսա ամեն բան—
 Հոկտեմբերը մեր հսկա
 Մեծ միջոցն և փրկության:
 Ապրիս, բալաս անուշիկ,
 Հոկտեմբերի պես փայլուն,
 Վոր հին խավար մշուշից
 Նոր աշխարհ ես ինձ տանում:
 Հոկտեմբերը տեսնելով,
 Զմայլում և իմ հոգին.
 Թույլ ձեռքերս պարզելով,
 Յես որհնում եմ ամենքին—
 Վոր ընկել են կովելով
 Հոկտեմբերը բերելիս,
 Վոր տանջվում են քրտնելով
 Նրա հիմքը դնելիս...

Թ ո ո ը.

— Պետք չե, նանի որհնանքը.
 Դու յել արի, աշխատի.
 Թեև կարճ և քո կյանքը,
 Զարկամներին խրատի:

Ն ա ն ը.

— Յես ել կգամ, բալա ջան,
 Ինչպես կուզեք, կաշխատեմ,
 Հոկտեմբերը թող ապրի
 Կարմիր լույսով փրկարար,
 Վոր աշխարհից վերացնի
 Ամեն մի ցավ, ամեն շառ.
 Խեղճութունը փարատի
 Ամբողջ յերկրի մարդկության,
 Սերն ու բարին հաստատի,
 Ապրի, ապրի հավիտյան...

Վահան Միրախյան



ՏԱՍԸ ՏԱՐՈՒՑ ՇԵՏՈ

(1917—1927)

Ա. ԱՆՋԻՄԵՆՍԿԻ

Զ Ո Ր Ա Տ Ե Ս

(Բեմադրության համար)

Գործող անձինք.— ԿԻՄ-ը, Ռուսական, Բուսական, Ֆրանսիական, Գերմանական, Անգլիական, Հնդկական և Ամերիկական կոմյերիտ-միությունները: Դեկորացրան— ինչպիսին և ուզենան: Պետք է վորեն կերպ ցույց տալ, վոր այս կամ այն կոմյերիտը վոր յերկրացի յե: Որինակ, կարելի յե գրել ու կախել կրճքին— «Անգլիա» և այլն: ԿԻՄ պատկերացնող դերասանը պետք է մի վորեն սիմվոլիկ հանդերձ ունենա: Բեմադրությունից առաջ լավ կլինի մի քանի խոսքով բացատրել, թերևս անհասկանալի բաների խմբավորումը, որինակ— «Սենայի ափերին», «Շպրեյի շրջան», «Ստիննես» և այլն:

(«Հակաֆաշիստական հիմք», լավ կլինի, վոր վերածվի բաղմամբան դեկլամացիայի):

ԿԻՄ-ը (Շեփարտս Ե)

Այս նույն ժամին,
Ամեն տարվան,
Տվել եմ յես
Խիստ հրաման.
«Թող զրոշ առնեն
Ձեռքերը մատաղ,
Գալիս է մեզ տես
Այսօր Ապագան»:
Սեպտեմբերի մեր
Առաջին կյուրակին
Մոռացել ես, հեյ,
Սենայի ափերին,
Ափերին Դանուբի,
Շրջանում Շպրեյի,
Նորածագ այս արգիին
Մեզ մայիս թող վառի:
Ձե ցրված խավարը գեռ,
Կաց պատրաստ, գու, արև,
Դուրս յեկեք հանդեսի

Հեյ, առույզ բանվորներ:
Ել վոշ վոք չմնա
Թող մենակ, վոշ մի տեղ,
Ուժեղին ուժ կտա
Միանա թեկուզ ծեղ:
Ո՞վ կարա ել մեր դեմ.
Մենք սարուկ չենք յերբեք,
Հանգուցված ենք իրար,
Մենք ըմբոստ հողիներ:
Ո՞վ է, վոր արթուն չե,
Համարձակ յեղեք, հեյ.
Այցի յե գալիս տես
Ապագան այսօր մեզ:
Հեյ, կոմյերիտներ
Ամբողջ աշխարհի,
Նոր արև պիտ կերտենք,
Մենք մի նոր գարունի:
Վեր հանենք արևն եզ
Ուսերով մեր ուժեղ,
Ով ձեզնից մեզ հետ է,
Մրձագանք տվեք, հեյ...

(Դուրս է գալիս Ռուսական Կոմյե-րիտմիությունը):

Ռուսական Կոմյերիտիությունը
Ամեն տանջանք կրեցինք մենք
Են որերում կռիվների
Ու տոնում ենք մեր տոնը մեծ
Այսօր յերկրում Խորհուրդների:
Ույժն ու սերը դրած մեզ հետ
Բանվորների մեր աշխարհի.
Ու հսկում է արթուն ու դետ
Իշխանությունն աշխատանքի:
Սուր սվինը բանակայնի
Մեզ պահապան կանգնած հզոր,
Առնում ենք մենք զենքը գրի
Փարգործապրոցում ամենօր:
Խորտակում ենք աշխարհը հին
Մեր նոր գործով, գիտությամբ
նոր,

Ակումբներում, գործարանում,
Ամեն մի տեղ, ամենայն որ...
Մենք լավ գիտենք. գրքերը մեր,
Մեր աշխատանքն ու մեր պայքար
— Հեռուների հեռու յեղբայր—
Կատարում ենք վողջ քեզ համար:
Կուռ հանգուցում մեր կամքերի
Կչքանա խավարը խոլ.

Դարձուր աշխարհը կոմյերիտ
Հեյ, գու գալիք կովի մեծ որ:

Իսպախական Կոմյերիտիությունը
Բիրտ ֆաշիզմից թեև ճնշված,
Մեր վողջունն ենք զրկում քեզ,
ԿԻՄ.

Ձենք տա կուլում արյամբ ներկված
Մեր գրողը մենք վոշ վոքին:
Թեկուզ ամեն մեր քայլն անցած
Արշալույսի պես կարմրի,

Դարձյալ ցույցի կզանք պատրաստ
Ավագ տոնին սեպտեմբերի:

Ու կհասնի որն ըսպասած,
Յերբ աշխարհի տեր կլինենք մենք
Յեվ մեր ճամբան դժվար անցած
Մեր յերգերում ուրախ կերգենք:
Ֆրանսիական Կոմյերիտիությունը

Կեցցե, վողջուն ալ
ՅՓՇՈՇՈՒՄ-ին
Մահ քեզ, կապիտալ,
Մահ Պուանկարեյին:
Ո՞վ է մեզ համար
Կապանքն այս կռել,
Մենք կոմյերիտ ենք,
Վոշ ֆրանսացիներ
Ձենք կարող կրել:
Խոշ է ավել մեզ
Պատերազմը մեծ,
Վոր հարուստներին
Միայն ուռցրեց:
Մենք մրրիկ նրանց համար,
Մեր տոնը—նրանց մահ.
Հեյ, Ռուրի յեղբայրներ,
Տապալենք պիտի մենք
Ամեն տեղ կապիտալ:

Գերմանական Կոմյերիտիությունը
Վողջուն, վողջուն, մեր ԿԻՄ-ին.
Զորատեսի գալով մենք,
Կոշ ենք նետում ֆաշիզմին—
«Ո՞վ կհաղթի—կտեսնենք»:
Խոշ, կարծում եք Ֆրանսիային
Ապառնալիք տվի յես,
Ձե, իմ գերման Ստիննես—
Դու յես մեր մեծ թշնամին,
Մերկ բանվորը ֆրանսիացի,

Շորը ծախողն իր հագի,
 Չէ հաստացրել հո գրպան
 Պատերազմում սրբազան:
 Հո, ջարդված են գերմանները,
 Նրանց հասած ենք ան վիշտ:
 Հապա ինչո՞ւ հարուստներդ
 Գերանում եք ինչպես միշտ:
 Հեռու ձեռքներդ ֆաշիստներ,
 Ել չեք կարող խաբել մեզ,
 Ել չեք կարող ազատվել,
 Հաստատ խոսք ենք ասում ձեզ,
 Գալիք նոր մեծ հրդեհից:
 Ու ախորժառ տոնը մեր
 Մահագույժ է ձեզ համար,
 Վոր բերել է սեպտեմբեր:
 Հնդկաստանի Կոմյունիստական
 Անգլիական կրոնիկի տակ,
 Բեռը ծանր, ուժից վեր,
 Ցաված մեջքով ու կոշտապատ
 Մենակ հինգուսն է տարել:
 Ո՞վ է տեսել մեջքին պարել:
 Այդ ել ենք մենք ճաշակել:
 Դեռ այդ փոշին, մենք հարկադիր՝
 Նրանց պարն ենք նվազել:
 Ով ել լինի, հինգուսն, թե այլ,
 Ով հարուստ է, փողջը մին:
 Միատեսակ պար են գալիս
 Խեղճ բանվորի կոր մեջքին:
 Բայց գաել ենք ազատութան
 Ակն ու ազդյուրը հիմա—
 Յերիտուխյան մեջն է նա մին,
 Մին՝ պայքարումն անյերկբա:
 Նախամրրիկն ենք մեծ կովի,
 Արևելքում ծագելիք
 Ու մեր ձեռքով պիտի լինի
 Մահը մեր իսկ ճնշումի:

Անգլիական Կոմյունիստական

Ձեզ հետ ահա դեպի ԿԻՄ,
 Չորատեսի յեն յեկել
 Կուռ շարքերով միասին
 Անգլիական յերիտաներ:
 Կերպոնների հաստ ճակատին,
 Հեյ, յեղբայրներ, յեկ կոշ նետենք:
 — «Ազատութուն Հնդկաստանին,
 Գաղութների ըստրուկներին»:
 Դիտենք վոր չի պատասխանի
 Բուրժույ ու լորդ Կերպոնը մեզ,
 Հնչեցրեք կոմյունիստի
 Մեր փողջույնը գանգալի պես:
 — Եզ ինչո՞ւ յես գեմքդ կնճռում,
 Բուրժույ գեմքիդ հպարտ ծիծաղ:
 Տես, լորդերիդ բաղդն ենք վճռում,
 Պատրաստում ենք ամուր դադադ:
 Ձենք խնայում ել ձեզ համար
 Թուկ ու ոճառ
 Պատրաստել ենք գերեզմանդ,
 Հեյ կապիտալ:

Ել ճար չունեք դուք մեր ձեռքից
 Հասել է ձեր ժամը վերջին:
 Գալիք կովի յերգն ենք յերգում
 Մեր մեծ տոնին սեպտեմբերի:

Ամերիկական Կոմյունիստական

Դուգրլ Յանկին ուրախ ու լավ
 Շատ սիրելի մարդ է մեկ:
 Նրա տերն ու արքան—դոլլար,
 Նրա խիղճը միայն—չեկ:
 Նա, դոլլարով—ինչ ուզես դու,
 Թեկուզ հոգին, մի վախի,
 Միայն գին տուր քիչ ձեռնառու՝
 Հորն ու մորն ել կծախի:
 Շահասեր է Յանկին անգուստ,

Թալանում է որ, գիշեր:
 Ուրախ կլինեք, թե վոր մեզ իսկ
 Մի կերպ կարար կաշառել:
 Բայց մենք գիտենք—
 Յերբ կհասնենք այն սրին,
 Կովով միայն
 Վերջ կտանք այս բոլորին:
 Պատրաստ յեղեք, պատանիր,
 Միշտ կովի:
 Ռազմափորձերն են հիմի,
 Սեպտեմբերի որերին:

(Բոլորը շարք են կանգնում: ԿԻՄ-ը
 մոտենում է, դիտում բոլոր շարքերը):

Բուրք

Ույժ առեք, թեկեր,
 Մրրիկները դեմ:
 Յերկինքն են ընկել
 Ազոափները սև:
 Ու ճուտերն իրանց
 Հայացքով գայլի
 Նոր շարք են կազմում
 Սև ազոափների:
 Խաչ ունեն շապկին,
 Իսկ
 Մեր ճակատին
 «ԿԻՄ»:

Դուրս կգանք կովի մենք,
 Հեյ, յեղիր անվեհեր:
 Մենք հետո կտեսնենք՝
 Ում կտուցն է սուր, կեռ:
 Յեվ ընդդեմ զգվելի
 Ազոափաճուտերի:
 Դուրս յեկան բանակներ
 Կոմյունիստների,
 Ձենքերը պատրաստ,
 Յեվ կազմ, և զգաստ:

ԿԻՄ-ը

Բոլորն եք աստ:

Բոլորը:

Ու կա՞ք պատրաստ:

Կանք:

Դեպի տոաջ, կոմյունիստներ,
 Բայցեցեք այս սեպտեմբերին,
 Պետք է մի նոր արև կերտենք,
 Վոր տաք հանուր ՅՓՇՈՒՄ-ին:
 Բայց կապիտալն է անողոր
 Մեծ կոիֆներ կըլինեն տաք,
 Միլիոնավոր ֆաշիստներին
 Ինչքան ճակատ դեռ պիտի տանք:
 Մենք միշտ պատրաստ կոիֆների,
 Ու մեր կազմը կուռ անաստան:
 Դե, յեղբայրներ, մի վեր քաշենք
 «Հիմն հակաֆաշիստական»:

Հակաֆաշիստական հիմնը

Հրացանդ առ,
 Մարտ է հրես,
 Հեյ, սև ազոափ,
 Դե ճարդ տես:
 Մենք կտեսնենք դեռ՝
 Ում կտուցն է սուր,
 Ում ույժը ափել,
 Ով ումից հզոր:
 Անճոռնի հրեշ,
 Դիտենք կմեռնես,
 Հողմը նետի ցած,
 Գնդակն անցնի թափ,
 Մանգաղը հնձի,
 Մահացու իջնի
 Հարվածը մուրճի:

Գ. Մեսյան

ԲՈԼՇԵՎԻԿ ՎՈՋՆԻՆ

(Հեգլար)

Մի որ այն թավ, կանաչագարդ անտառում
 Նապաստակը աղվեսին և հանդիպում
 Յեվ ասում է. «Վողջույն, իմ հին բարեկամ,
 Այդ վորանդից, ուր ես շտապում այս անգամ»:
 Մեր աղվեսը նապաստակին դորշամորթ
 Պատասխանեց. «Գնացի այսօր վոգնու մոտ.
 Քեռի վոգնին հրավիրում է մի ժողով,
 Զահեղներին հավաքում են բոլոր...
 Դու յեղ արի իրիկնային մեղմ հովով:
 Բա չըգիտես, փոքրիկ ընկեր իմ, շղիկ,
 Զե՞ս իմացել, վոր մեղանից շատ մոտիկ
 Մի վայրենի հսկա վարագ է յեկել,
 Մեր հարագատ թավ անտառում բուն գրել:
 Աշխատասեր քեռի վոգնին գրա համար
 Ժողովում է ջահեղներին անհամար,
 Վոր վորոշի ինչպես պետք է պայքարել,
 Այդ գաղբելի չար վարագին դուրս վանել»:
 Յեվ խոստացավ նապաստակը աղվեսին,
 Վոր անպայման կը մասնակցի ժողովին:
 Առաջ շտապեց նապաստակը մեր շղիկ.
 Մեկ եղ տեսավ, յերկու քոթոթ կարճ, հասուլիկ.
 Զգվել եյին արևի տակ նրանք անշարժ,
 Թըմփիկ, բրդոտ, այնպես փոքրիկ, ծիծաղչարժ:
 Նրանց ձայն տվեց նապաստակը վոստոստոդ—
 — «Խաղանք ֆուտբոլ ձեր գնդակով, փոխեփոխ»...
 Պատասխանեց նրան մի քոթոթ տրամագին—
 — «Քեզ հետ խաղալ մենք չենք կարող, իմ անգին,
 Արգելված են վոզ խաղերը արքայից,
 Խիստ հրաման կա չար վարագի պալատից»:
 Յեվ արտասովեց արջի քոթոթը փոքրիկ,
 Պատմելով այդ նապաստակին մեր շղիկ:
 Յեվ վարագի արարմունքից զարմացած,

Գլուխը շարժեց նապաստակը վշտացած.—
 — «Ել կյանք չը կա մեր անտառում հարագատ,
 Խոչ և ուզում չար վարագը այդ հպարտ»:
 Բարձրացնելով ականջները խրլըշկան,
 Առաջ գնաց, բռնեց յերկար իր ճամփան:
 Տեսավ մի սկյուռ, ծառի վրա կծկվել,
 Իր հայացքը նապաստակին և հառել:
 — «Բարե, իմ սկյուռ, բարե, անգին բարեկամ,
 Իջիր ներքև, այստեղ խաղանք, թռչկոտանք»...
 — «Խոչ ես ասում, ինչ խաղ, ինչ բան, իմացիր,
 Թե չը գիտես, վոր վարագը այն գաղի
 Արգելել է ամեն մի խաղ անտառում,
 Ել չեմ կարող յես թռչկոտալ անդադրում...
 Մահն է սպասում ինձ, սե մահը այն գաժան,
 Լավ որերը գընացին անհետ ու կորան»:
 Յեվ մտածեց մեր շղիկը տրամագին,
 Վոր վարագը մահ կը բերի ամենքին,
 Վոր բոլորին կարևոր է միանալ,
 Յեվ միացած չար վարագի դեմ դուրս գալ:
 Ու նա գիմեց փոքրիկ սկյուռին գեղնագույն.—
 — «Այս բոլորը պետք է պատմենք մենք վոգնուն.
 Թող քո ծառը, իջիր ճյուղից քո սովոր
 Յեվ յերկուսով շտապենք գընանք մենք ժողով,
 Այնտեղ դու շատ նոր-նոր բաներ կիմանաս»:
 Համաձայնվեց փոքրիկ սկյուռը թավամադ.
 Նապաստակի հետ միասին նա քայլեց,
 Փոքրիկ թըմփիկ քոթոթներին հանդիպեց.
 Առաջվա պես նրանք արխուր ու արբուռ.
 Նստել եյին խիստ մտադրաղ, լացակուռ,
 Վոր հյութալի խոտերի մեջ չեն կարող
 Խաղալ իրենց գնդակի հետ թռչկոտոդ...
 — «Ե՛յ, լսեցեք,—ասաց շղիկը նրանց,—
 Յեկեք գընանք, թողեք տընքոց ու ձեր լաց,
 Վոգնու տանը մեծ ժողով է գումարված»:
 Քոթոթները հավան կացան շղիկին,
 Նրա յետևից որորվելով գընացին:

Այդպես հասան վոգնու տունը չորս հոգի.
 Ահա տեսեք և ժողովը բողոքի...
 Այվուկ, կանչեր, իրարանցում և շփոթ,
 Ճառեր, ճառեր, վոր դարձնում են նրանց սրտոտ:
 Կենդանիներ տեսակ-տեսակ անհամար՝
 Ճնշվածների հսկա բանակը ստվար:
 Ահա յեկավ քեռի վոգնին մռայլված,
 Հուզող, ուժեղ, կրակոտ ճառը պատրաստած.
 — «Վերջ ճնշումին ու սարկության աներեր,
 Կենդանիներ, յեւեք կովի անվեհեր.
 Պետք է կորչի մեզ ճնշողը անպիտան՝
 Մեր թշնամի վարազ արքան չար, դաժան.
 Կորչի, կորչի, արքաներին անվերջ մահ,
 Միայն տենչած ազատությունն է անմահ:
 Դե, միացեք դուք, ճնշվածներ անհամար,
 Կովի յեւեք վարազի դեմ նենգ ու չար»:
 Սկսվեց շարժում, իրարանցում անսովոր,
 Առաջ գրնացին կենդանիները բոլոր,
 Իսկ առջևից ալ ծածանվող զրոշակներ
 Յեւ դրդող հսկա գրնգուն թըմբուկներ.
 Ազդակներ—«Կորչի ցեղը վարազի,
 Մենք ազատ ենք, տերն ենք այս վողջ անտառի»:
 Յեւ հաղթելով, նրան անտառից քշեցին:
 Ու քշելով իրենց ազատ բզգացին:
 Հիմա այնտեղ նոր որենքներ են իշխում՝
 Սկյուռ, նապաստակ պահմտոցի յեն խաղում:
 Ամեն մեկը ունի իրեն ապաստան.
 Քոթոթներն էլ, միշտ իրարից անբաժան,
 Հիմա արդեն վազվզում են անարգել,
 Թուտբոլ խաղում, չը խնայելով վոտ ու ձեռ:

Թարգմ. ուսերենից Հ. Պողոսյան

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՔՅԱԹ

1.

— Ե՛յ, թոռնիկներ,
 Զան թոռնիկներ,—
 Քյուլ տնիմ,
 Քյուլ-գյուլ տնիմ,
 Դուք եք կարմիր գյուլն իմ,—
 Կարմիր-կարմիր լալազար՝
 Վարդաթերին հավասար:
 Եսպես ըսկսեց
 Մեր Շարմազ տատը
 Իր Հոկտեմբերյան
 Կարմիր Հեքյաթը:
 Ասավ,—
 — Սա են տեսակ հեքյաթ է,
 Պատմության մեջ մի հատ է.
 Խոսքը դարձի՛
 Հաստտ վարդ,
 Միտքը պայծառ՝
 Ծաղկած ծառ:
 Ով յտում է՝ սիրտ առնում,
 Վոգևորվում, զորանում,
 Թուրը կարուկ մարդ գառնում
 Ահն ու մահը մոռանում:
 Այ, հենց եսոր
 Հոկտեմբեր է,
 Մի զորավոր
 Հոկտեմբեր:
 Հենց նա յե, վոր
 Զեզ կը բերե
 Մի փառավոր
 Լավ նվեր:
 Այ ու ալփան
 Դրոշակ—

Հոկտեմբերյան Հիշատակ:

Թոռնիկներն ուրախացան,
 Ուրախ-ուրախ իրար սնցան...
 Ու ասին.
 — Ես նվերը միասին
 Միշտ կը պահենք մեր ուսին,
 Կառնենք, կանենք կրծքի զարդ
 Ու կը դառնանք կարմիր մարդ:
 2.
 — Այո, այո հենց եզպես՝
 Թուրը կարուկ քաջի պես,—
 Եսպես առավ մեր տատը,
 Շարունակեց հեքյաթը.—
 — Հապտ տեսեք՝
 Պստիկ-մստիկ
 Հոկտեմբերիկ,
 Քնքուշ-մնքուշ
 Հոկտեմբերանուշ,
 Այ փողկապով պիոները
 Զարգարում են մեր տները,—
 Զեք տուր՝ հասնեն,
 Բան դիր՝ վազեն,—
 Հոկտեմբերիկն է զգաստ,
 Պիոները՝ «միշտ պատրաստ»:
 Այ, հենց դուք եք
 Հոկտեմբերյան պտուղը,
 Են մեծ ծառի
 Այ ու ալփան թարմ ճյուղը:
 Թոռնիկները
 Վեր թռան,
 Այ ձեռքերը
 Վեր տարան,

Նշան արին՝

Թե հաստատ

Մենք կանք եստեղ

«*Uires uisurus*»:

3.

Տասը նորից

Շարունակեց.

— Տաս տարի առաջ

Զինվորները քաջ

Կռվի դուրս յեկան

Յարի դեմ դաժան.

Ու փետրվարին

Են դաժան ցարին

Իրեն պալատից

Իսպառ դուրս արին:

Իսկ Հոկտեմբերին

Բանվոր, գյուղացին

Նոր ուշտեր բերին,

Նոր կռիվ բացին:

Ի՜նչ իրարանցում,

Արյուն, ափերած,

Ուժերի մրցում,

Մահ ու կոտորած:

Վերջը հաղթեցին

Մեր հերոսները,

Գահը խլեցին

Ու դարձան տեր:

Ամեն տեղ տիրեց

Խորհրդայնացում,

Նոր կյանք նվիրվեց

Բանվոր-գյուղացուն:

Են որից եսոր

Մեր կյանքը խաղաղ,

Մեր ուշտը հզոր,

Ասլորում ենք անվախ:

4.

— Յես ել եմ անվախ, —

Տեղից վեր թռավ

Պատիկ Արշակը, —

— Յես ել եմ ուրախ,

Այ, իմ ծիածան

Կարմիր դրոշակը: —

Ի՜նչ ծափ ու ծիծաղ,

Ել ի՜նչ խաղ ու պար, —

Ով ասես դոշաղ,

Մի քաջ եր վոր կար:

Հետո մեր տառը

Իրեն հեքյաթը

Եսպես վերջացրեց. —

— Գյուլ ունիմ,

Գյուլ-գյուլ ունիմ,

Դուք եք կարմիր գյուլն իմ,

Կարմիր,

Կարմիր,

Լալազար

Վարդաթերին

Հավասար:

Հավուր Աղաբաբ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԵՏ ԴՈՒ ՔԱՅԼԻՐ

Բեմագրություն

I հեստահան

(Բանվորներից մեկը՝ առաջնորդը, բարձրանում է պատվանդանի վրա և կանգնում Լենինի կիսանդրի կողքին):

Բանվորների կողիկսիվ

Վողջ աշխարհում անծայրածիր
Հոկտեմբերը հաղթ ու կարմիր
Նա հաստատեց անպարտ ձեռքով.
Բայց այդ մարդը պողպատ կամքով
Այսօր չը կա, մեզ հետ չի նա...

Բանվորուհիների կողիկսիվ

Ժողովուրդն է սգում հիմա,
Վոր տասերորդ տարեդարձին
Մեզ հետ չի նա...
Արշալույսը, վոր կը ցնծա,
Վառ արևին միշտ տեղ կը տա,
Յեվ Լենինի մահն ել այդպես,
Անմահության դարձավ հանգես:

II հեստահան

Կույրիկսիների կողիկսիվ

Նոր սերունդը մեր պայքարող
Հոկտեմբերին տվավ ընթացք,
Քչեց, ուժով հաղթանակող,
Հին չարիքը անվերադարձ:
Պրոլետարի առաջնորդին
Կ'անմահացնի մարմարը հաղթ,
Իսկ նրա վոգու ուշտը արի
Կը պահպանի սերունդը զվարթ:

III հեստահան

(Կարելի չի կազմակերպել շքերթ բո-

լոր կողիկսիների եմբեմներով, ի՜նչե-
լով բեմից դեպի հանդիսականները):

Բանվորների կողիկսիվ

Յետ չը մնաա Հոկտեմբերից,
Հոկտեմբերի հետ դու քայլիր,
Վոր չը շեղվես մեր նոր ճամփից
Մինչ իններորդ, վերջին, ալիք...

Բ ո լ ու ը

Հոկտեմբերի հետ դու քայլիր:

Բանվորուհիների կողիկսիվ

Ուրիշներին տուր որինակ:

Բանվորների կողիկսիվ

Նվաճումները պահպանիր,

Հոկտեմբերին յեղիր պահակ:

Բ ո լ ու ը

Հոկտեմբերի հետ դու քայլիր:

Կույրիկսիների կողիկսիվ

Արթուն հակիր դու անձնվեր:

Գյուղացիների կողիկսիվ

Սովետական զրոշ, ծածանվիր...

Կոմունիզմը այրեց դարեր:

Բանվորների յեվ կույրիկսիների կողիկսիվ

Ժողովրդի մեջ տարածիր

Հոկտեմբերյան կոշը հրակեղ.

Բ ո լ ու ը

Հոկտեմբերի հետ դու քայլիր,

Ինչպես ասաց Իլիչը մեզ:

Թարգմ. սուսեր. Հ. Պողոսյան

Կ Ո Մ Յ Ե Ր Ի Տ Մ Ա Ր Ո Ն *

Բեմադրություն 2 պատկերով, մշակեց Դիս. Հովն.

Գերակատարներ.

Ուստիան (գյուղացի պառավ կին)	60 տարեկան
Սաքո (վարդին)	41 »
Շուշան (Սաքոյի կինը)	17 »
Մարո (Սաքոյի քույրը, կոմսոմ., նախ. կանանց միության)	17 »
Ջավահիր (կանանց միության քարտուղար)	17 »
Տերտեր	60 »
Տիրացու	40 »

Կանանց միության հին և նոր անդամներ և ներկայացուցիչներ Յերեվանի մանկավարժական տեխնիկումից:

Ա. Պ Ա Տ Կ Ե Ր

(Գյուղի սենյակ—խրճիթ)

ՇՈՒՇ.—(Յերգում է Հ. Ս. «Աւիսաւիւր բանս, մեջը անբաղլ...»): Յերեւանի ծվում է որորոցում: Հերիք, հերիք, թաթաշ-թաթաշ լաս, ելի չոռ դիպավ քեզ, սիրտս մաշեցիր (նայելով խրճիթի մուսֆին): Մարոն ուշացավ, նա յեւ վոր ես քանգվածում չըլեր, ի՞նչ կը լիներ իմ որը: Ասում ե, —քեզ կը գրեմ կանանց միության մեջ, վորտեղ կանայք ասում, խոսում են իրենց ցավերից, աշխարհից բան են հասկանում, մարգամեջ ընկնում (յերեւանի ֆեւադ է):

ՄԱՐՈ.—(Ներս քնկնելով): Աղջի Շուշան, ելի քիթդ կախել ես, ի՞նչ ե, ելի ազին բարկացել ե (բռնում, փառում է Շուշանի փրքը), հագար անգամ ասել եմ, բանի տեղ մի գնի:

ՇՈՒՇԱՆ.—Մարո ջան, ետոր ելի խոսեց, թե՛ «Լակոտիդ պետք ե կնքել, հարամ վեր եք գցել»:

ՄԱՐՈ.—(Բարձրագոյ): Ի՞նչ կնունք, ի՞նչ բան, քանի ես տանը յես կամ, տերտերի վոտ չըմանի: Յես ուրիշներին եմ քարոզում. ել ի՞նչ կոմսոմոլիստ եմ, կնունք, չե, չե մի...

ՈՒՍՏԻԱՆ.—(Բարկացած յեւ անհանգիստ ձեւերով ներս քնկնելով): Ջարոյենց տանն ելի նոր: Ես ինչե՞ր եմ լսում, սաղ գեղն ամբաստանում ե քեզ: Ասում են՝ աշխարհքում ել գյաղա չի մնացել—գլխիդ ես հավաքել: Վա՛յ, աստված, աստված, յերեսս վոտիդ

*) Ա. պատկերը ըստ կին պրոդեզդոր Արսիսու:

տակ. ես հասակի կնիկ եմ, ես բանը տեսած չեյի: Ինքդ թուկից փախել ես, հիմի յեւ հարսիդ ես գլխահան անում...:

ՄԱՐՈ.—(Վնուական): Աղի, հերիք ե, իզուր մի մաշի քեզ, յես իմ ճամբեն ունեմ. յես նոր աշխարհի հետ եմ գնում. հագար խոսի, ոգուտն ի՞նչ. թող պառավները բամբասեն:

ՄԱՅՐԸ.—(Կասաղությունից մագերը պոկելով): Աման, խայտառակ արիւր մեզ. Մուքի, այ իմ սիրած ամուսին, մի գլուխդ բարձրացրու գրեզմանիցդ ե. տես, աղջիկդ ինչե՞ր ե անում, վա՛նց ե մեզ խայտառակ անում: Բա դու եղ ելիր խրատում...:

ՄԱՔՈ.—(Հանդից հոգնած տուն գալով): Ելի ազմուկ եք գցել, ա՛յ աղի, հերիք չի՞ ես ջահեխներ հետ ընկնես, ի՞նչ ես ուզում, ի՞նչ: (Քոջը յեւ կնոջը): Ի՞նչ եք ուզում ես պառավից, այ անդընջումներ (նստւմ է քախսին յեւ պատասխանում է հանել տեխնիկումի ու գուպաներ):

ՈՒՍՏԻԱՆ.—Յես ես բանը չեմ տանի,—ես լակոտին կամ կրնքեցեք, կամ թե չե տոպրակն ուսս կը գցեմ, աղքատություն կանեմ. յես անքրիստոնի տանը չեմ կենա: Ամբողջ գեղը մեզ վրա յե խոսում, թե «ըեխին կնքելու չեն»: Յես ես գնում եմ տերտերին կանչեմ, թող գա, ջուրը քաշի:

ՄԱՐՈ.—(Իեւր յեկնելով): Ասում եմ քո գործը չի, աղի. դե ասա. յերեխան քոնն ե. սրանք են նրա հերն ու մերը, ինչպե՞ս կուզեն, այնպե՞ս ել կանեն: Ջաղսում գրել ենք տվել, յերեխան արգեն կընքված ե նոր կարգով: Տերտերը մեր տունը վոտ չը պիտի գնի, հերիք ե, ինչքան նրանց յետեից ընկանք:

ՄԱՐՈ.—(Հարձակողական): Վա՛նց թե տերտերը մեր տունը վոտը չպիտի կոխի, անգամ, լեզուդ քրքրվի... փչացած... Ա՛յ մերա, կաց, կաց, յես տերտերին կանչել եմ, նա ես կը գա: (Շարունակելով): Սրանք իրենց ասածը կօրցրել են, սրանց համար ել կնիկն ու աղամարդը ջոկողություն չունեն:

Դրսից լսվում է խոսակցություն: Ներս եւ մնում են տերտերի ու յիրացուն:

Մաքոն տեղից վեր է կենում, մայր ու վարդի ընդունում են նրանց:

Այդ միջոցին Մարոն մտնում է Շուշանին:

ՄԱՐՈ.—(Կողմ): Աղջի, դու իսկի յեւ սիրտդ մի կտորի, քու խոսքին կաց. մի թողնի, վոր յերեխեդ հարամեն:

ՏԵՐՏԵՐ.—Սաքո ջան, գործս թողել եմ ու քեզ մոտ եմ վռազ
յեկել: Որհնյալ լինի Մուքու ոջախը: Աղջի, Շուշան, բեր, բեր մի
առջնեկդ կնքենք—քեզ ել եմ յես կնքել, Մարոյին ել, Սաքոյին ել:
Սազ գեղը ես իմ հալալ ձեռով ե կնքած: Եհ, ժամանակ, ժամանակ...
Հազարավոր տարիների յեկեղեցին, խաչն ու ավետարանը ուզում
են վերացնի: Խոխեք... Դե, շուտ արեք, ջուրը պատրաստ ե:

ՇՈՒՇԱՆ.—(Այլս առնելով): Տերտեր, իմ յերեխան չի, չեմ ու-
զում կնքել, ել մենք հին աղաթով չենք գնում:

ՄԱՐՈ.—Հարգելի տեր, մեր յերեխան կնքված ե նոր կարգով
—Չագսով. մենք հին սովորությունները թողել ենք:

ՈՒՍՏԻԱՆ.—Անգգամ, լիբբ, ձենդ կարի, կսնցումով գլուխդ թա-
ղեմ: Տեր-հայր, դու սրանց ախանջ մի անի:

ՍԱՔՈ.—Ուհ (պատասխանում ե փայտի իջեցնել կնոջ վրա):

ՏԵՐՏԵՐ.—Վարդիք, ինչպես եք փչացել, ամբի ես ոջախին.
թյու, յես ել ես ոջախը վաքս չեմ դնի... (Տիրացուի հետ դուրս ե
գնում: Յես բերելու նպատակով յեսելից գնում են Սաֆոն յեվ
Ուսիանը: Գրսից լսվում են տեսերի գանգատները յեվ մութ անհան-
գիստ խնդիրները):

ՄԱՐՈ.—Հա, հա, հա, հա, տեսար, վոնց փախցրինք սև սատա-
նին: Բա ել վոն սրվա կոմսոմոլիսան եմ, վոր գեղացոց չազատեմ
ես թախանչիների ձեռքից: (Յերգելով՝ Շուշանի ձեռքից բռնած՝
պսույս ե գալիս սենյակում):

Վարագույր—վեց Լ-ին պատկերի:

Բ. Պ Ա Տ Կ Ե Ր

Խրճիթ-ընթերցարան: Կանանց միության ընդհանուր ժողով*: Ժողովա-
կանները հետզհետե հավաքվում են: Խրճիթ-ընթերցարանը զարգարված ե
Հոկտեմբ. հեղափոխ. 10-րդ տարեդարձի տոնակատարության պատշաճ: Նա-
խագահում ե Մարոն, վորին ընդունում են ծափահարությամբ:

ՄԱՐՈ.—(Գրավում ե տղր յեվ գանգամաբար հարկադարձի):
Ընկեր Ջավահիր, կարգա, այսոր ինչ հարցեր կան սրահարգում:

ՋԱՎԱՀԻՐ.—Առաջին.—յերեք նոր անդամի կանանց միության
մեջ ընդունելու հարցը. — ընկ. ընկ. Ոսան, Մանուշակ ե Շուշան,
2) Հոկտեմբերյան հեղափոխության 10-րդ տարեդարձը:

* Ժողովի անդի յե ունենում 1927 թվի նոյեմբերի 7-ին — Հոկտ. Հեղ. 10-րդ տարե-
դարձի նախընթաց օրը:

ՄԱՐՈ.—Ընկերներ, ուրիշ հարցեր չունեք. յեթե չունեք, անց-
նում ենք ժողովի: Ընկ. Ոսանը ցանկանում ե մեզ հետ
աշխատել ե գրվել կանանց միության մեջ. կարծում եմ, բոլորդ ել
ճանաչում եք նրան: Ընկեր Ոսան, կանգնեցեք: (Ոսանը կանգնում
ե): Ու՛ր ինչ ունի ասելու նրա մասին. վոչ վո՞ք. ուրեմն ընդուն-
վում ե: Ընկ. Մանուշակը մեր հարեան գյուղացի յե. նրա մասին
ինչ կասեք (Մանիշակը կանգնում ե):

ԺՈՂՈՎԱԾԱՆ.—Յես ուզում եմ ասել, թե ինչո՞ւ Մանիշակը ի-
րենց գեղումը չի գրվում:

ՋԱՎԱՀԻՐ.—(Չայն վերցնելով): Յես ասեմ. Մանիշակենց գե-
ղում կանանց միություն չըկա դեռ:

ՄԱՐՈ.—Յեվ մենք նրան կընդունենք. նա մեզ մոտ կփորձվի
ու իրենց գյուղումն ել կը կազմակերպի կանանց միություն:

ԱՄԵՆ ԿՈՂՄԻՅ.—Ընդունել, ընդունել... (Հարցը վերաբերում
ե Շուշանին. ժամանակավորապես նախազանում ե Ջավահիր):

ՋԱՎԱՀԻՐ.—Յերրորդ ընկերը, վոր ուզում ե մեզ հետ աշխա-
տել, Շուշանն ե, մեր Մարոյի հարսը: Ընկերներ...

(Գծի նման ներս ե ընկնում Սաֆոն յեվ սկսում փնտել կնոջը):

ՄԱՐՈ.—(Տեղից): Սաքի, դու ինչ ես ուզում. ինչո՞ւ յես յեկել,
դու խանգարում ես:

ՍԱՔԻ.—Ձենդ. ինչ եմ ուզում, յես իմ կնիկն եմ ուզում (Շա-
րունակում ե փնտել նրա աչքից խառափող Շուշանին):

ՋԱՎԱՀԻՐ.—Ձեր կինն այժմ ժողովի մեջ ե, նա գործ ունի:

ՍԱՔԻ.—(Քաշելով կնոջ քեղից): Աղջի, այ կապը կարած, դու
քանի գլուխ ունես, վոր յեկել ես ետեղ: Վեր, վեր, քաշվի, շուտ:

ՇՈՒՇԱՆ.—(Ազատելով քեղը Սաֆոյից): Ընկեր Ջավահիր, յես
միշտ տանջվում եմ սրա ձեռին, մեր Մարոն գիտե. յես ել եմ ու-
զում քիչ աչքս բաց անեմ, ձեր մեջ խառնվեմ, իմ մարդս ինձ չի
թողնում, ինձ ձեռնում ե...

ՋԱՎԱՀԻՐ.—(Բռնելով Սաֆոյի քեղից): Սաքի, դուք իրավունք
չունեք 'ոգովը խանգարելու. սա ձեր տեղը չի (մի քանիսն ոգնում
են Ջավահիրին՝ Սաֆոյին դուրս անելու):

ՍԱՔՈ.—Ձեր ժողովը քանդվի, դուք ել հետո տակովն ըլեք,
սիրտս հովանա: Հո բռնեցի, հո տեսա, վորտեղ ես, դե հիմի քու
որը տանը կբանես (բորտալով դուրս ե գնում, դուրսը շարու-
նակելով աղմկել: Յեսելից ծիծաղ):

ՁԱՎԱՀԻՐ.—(Չանգախառնելով): Ընկերներ, դուք լսեցիք Շուշանի զանգատը և ցանկությունը. ո՞վ է համաձայն՝ նրան ընդունենք մեր մեջ (բոլորը մաս են բաժնուցում): Ուրեմն ընդունվում է:

ՄԱՐՈ.—(Նախազանի տեղը գրավելով): Այսօրվա յերկրորդ հարցը Հոկտեմբերյան հեղափոխության 10-րդ տարեդարձն է: Ընկերներ, վաղը խորհրդային Միության բոլոր անկյուններում մենք տոնելու յենք մեր սոցիալիստական հայրենիքի 10-րդ տարեդարձը: Բոլոր կազմակերպություններում, քաղաքի թե գյուղի, լինելու յեն նախնական գեկուցումներ, ժողովներ, ճառեր, յերգեր, ուրախություններ, իսկ վաղվա օրը արդեն բոլորս պատրաստ ենք լինելու մեր գերոշակներով և լողունգներով, վոր գնանք կենտրոն: Ենտեղ ժողովրդական տոն է լինելու, մեծ, շատ մեծ տոն: Իսկ այժմ Յերևանի մանկավարժական տեխնիկումից մեզ մոտ են յեկել մեր շեֆերը, վորոնք մեզ համար գեկուցում կը կարդան: Խոսքը պատկանում է ընկեր Աշոտին:

ԱՇՈՏ.—(Չեկուցանող ընկերն ընդունվում է ծափահարությամբ: Կարդում է մի պարզ գեկուցում Հոկտեմբերյան հեղափոխության 10-րդ տարեդարձի առթիվ. իր գեկուցման մեջ շուշափում է սուավելապես Հոկտեմբերյան հեղափոխության գյուղում կատարած նրվանումները. այլ յեվ Կանանց Միության գործունեությունը՝ նյութ դարձնելով նաեվ Սաֆիի դեպքը: Չեկուցումը վերջացնում է ծափահարությամբ): Այժմ իմ ընկերները ձեզ համար կարտասանեն վոտանավորներ և կերգեր):

ՅԵՐԿՈՒ-ՅԵՐԵԲ ԸՆԿԵՐ.—(Արտասանում են յեվ յերգում):

ՄԱՐՈ.—Ընկերներ, շնորհակալություն հայտնենք մեր ընկերներին, թող նրանք շուտ-շուտ դան մեզ մոտ (ծափահարություն): Վաղը յերեկոյան, միտինգից հետո, մեր միությունն ամբողջ կազմով հրավիրված է մանկավարժական տեխնիկում, վորտեղ լինելու յե հոկտեմբերյան շքեղ յերեկոյթ (կրկին ծափահարություն): Ընկերներ, «Ինտերնացիոնալ» (կանգնում են յեվ յերգում «Ինտերնացիոնալ». նրանց ձայնակցում են նանդիսականներ):

Վարագույր—վերջ II-րդ պատկերի:

ԼԵՆԻՆՆ ՈՒ ԼԻԲԿՆԵԽՏԸ

(Բեմադրության նամակ)

(Ժողովը նվիրված է Լենինի և Լիբկնեխտի հիշատակին: Մեջտեղը սեղան նախագահության համար: Ժողովին մասնակցողները КИМ-ի ներկայացուցիչներն են զանազան յերկրներից):

Գեմանակալն Կուլյեիսմիության ներկայացուցիչը

Չորեքշաբթի, հունվարի 15-ին 1919 թ. ընկան Կարլ Լիբկնեխտն ու Ռոզա Լյուքսեմբուրգը: Մարդասպանների համար—գերմանական հանրապետական կայսերական սպանների համար—ամենալավ ժամանակն էր: Դեռևս ավտոմոբիլում, ճանապարհին՝ Մոաբիտ տանելիս, հրացանի կոթով յերկու անգամ հարվածեցին նրա գլխին ու, նրան, վոր համարյա կիսաուշագնաց էր՝ հարցնում էին—կարո՞ղ ե վոտքով շարունակել յերթը: Շրջապատած զինված պահակները նրան առաջ են տանում խափարի մեջ: Հետո Լիբկնեխտն ընկնում է: Գիշերվա խափարի մեջ ինչ-վոր տեղ գնդակահարում են նրան:

Մարդասպանները հայտնում են. «Լիբկնեխտը սպանված է փախուստի միջոցին»:

1 ձայնը.—Տխուր ձայներ են լսվում ամենուր:

2 ձայնը.—Թաղման դողանջ են հնչում զանգերն էլ:

3 ձայնը.—Մի նոր զոհ նորից...

1 ձայնը.—Անարգ մի ձեռքից

Բոլորը.—Լիբկնեխտն է ընկել:

1 ձայնը.—Ազմուկն այս մռայլ, թախծոտ ու տխուր:

2 ձայնը.—Բանվորի սրտին նոր փուշ է՝ խրված:

3 ձայնը.—Ու չի մոռանում թաղումն ահավոր

Լիբկնեխտին ընկած:

1 ձայնը.—Թեև նա ընկավ,

2 ձայնը.—Բայց սրտերում մեր մատաղ

Կովի ձայնը արյունոտ, մեզ վրեժի յե կանչում,

3 ձայնը.—Ու մեռած էլ, մեր հույզերում լավ ու վատ

Բոլորը.—Լիբկնեխտն է ապրում:

Գեմանակալն Կուլյեիսմիության ներկայացուցիչը

Ազնիվ մարտնչողին ու գերմանական մասսաների առաջնորդին

սպանեցին սոցիալ-դեմոկրատները, բայց Լիբերեստի ցանած սերմերը ծիրեր են ապրիս—ուժեղ ու հզոր ծիրեր: Գերմանական Հոկտեմբերը մոտենում է: Բանվորական մասսաները հարձակման են յեղնում: Գերմանիայի Կոմյունիստական խորհուրդը, պահելով Լիբերեստի պատգամները՝ պրոլետարիատի կարմիր հարյուրյակների առաջից կբայլի կապիտալիզմին ուղղված վերջին գրոհին:

1 ձայնը.—Անշեղ ե հարվածը դանակի...

2 ձայնը.—Ել ի՞նչ համբույր ե ինչո՞ւ:

3 ձայնը.—Լիբերեստն ընկավ Հուգայի ձեռքով:

1 ձայնը.—Հարկավոր չե արցունք ու լաց:

Լոկ մեր հոգին թող կսկծա:

2 ձայնը.—Իսկ մենք առնենք մեր գայլույթը ատամի տակ:

Բոլորը.—Դահձի այդ չար գործին արժան—

Թրի հարվածն ե պատասխան:

Գերմանական Կոմյունիստական ներկայացուցիչը

Գերմանական կոմունիստական կուսակցության ամենալավ առաջնորդները սպանված են ու կուսակցությունը քշված ընդհատակ:

Մենք հույս ունեյինք մոտիկ հաղթանակի, սակայն պետք ե փոխենք մեր ամբողջ գործելակերպը, աչքի առաջ ունենալով, փոր հաղթանակը դեռ հեռու յե: Մենք հարձակման յեղանք, մինչդեռ հարկավոր եյին ռազմափորձեր: Այն ժամանակ մենք այլ կերպ եյինք նայում ուսական հեղափոխության ու նրա մեծ առաջնորդ Լենինի վրա: Չե՞ վոր Լենինը 1905 թ. հետո՝ նահանջի ե 1917 թվի հաղթական հարձակման ռազմագետն եր: Նա պետք ե ուսուցիչը լիներ գերմանական կոմունիստական կուսակցության:

Այժմ գերմանական պրոլետարիատը հեղափոխական ահագին խնդիրների առաջ ե կանգնած: Ու հիմա մենք սովորում ենք Լենինի մինչ ու յեա-հոկտեմբերյան գործելակերպը:

Այժմ Լենինը վարում ե գերմանական հեղափոխությունը այնպես, ինչպես տարավ ուսականը:

1 ձայնը.—Հոկտեմբերյան ազդանիշով Ռուսաստանը բռնկեց:

2 ձայնը.—Մորիկների յերկունքներում կռում ենք մենք
Կոմմունան

Դիկտատորի մուրձերի տակ ծանր ու մեծ:

3 ձայնը.—Կուրծքն ե ուռչում Յեփրոպայի

Հուզումներում բանվորական:

1 ձայնը.—Պատրաստվել ե, պիտի շնչի

Բոլորը.—Սորհուրդների շունչը թարմ:

Ռուս կոմյունիստ.—Ընկերներ, Լենինը եր ե կմտա միակն ու անգուգականը դարեր շարունակ: Նա առաջնորդ եր նախ, այնպիսի առաջնորդ, փորի նմանը շնորհվում ե մարդկությանը հարյուրավոր տարիների ընթացքում: Լենինը—մեր բոլորիս առաջնորդն ե, մեր իմաստուն ուսուցիչը, մեր սիրելի, անդին ընկերը:

Վոնց կանցնենք առաջ:

Կզանենք ճամբան:

Բոլորը.—Կուսակցության կողմից մաքուր, կողմից կամքով—կզանենք:

Ռուս կոմյունիստ.—Չկա Լենինը, բայց լենինիզմը վնչ միայն կենդանի յե, այլ ե նոր ե սկսվում նրա ծաղկումը: Լենինի գաղափարների իսկական հաղթանակը Յեփրոպայում, Ամերիկայում, Արևելքում, ամբողջ աշխարհում մեր առաջն ե դեռ:

1 ձայնը.—Վորտոր կարո՞ղ ե համբանալ միթե:

2 ձայնը.—Կզանենք թաթառը—վոր չփորտա:

Բոլորը.—Վոնչ: Չի թուլանա կամքը լենինյան—

Միլիոն կամքերով ուժեղ P. K. П.

1 ձայնը.—Վոն յերկյուղ,

2 ձայնը.—Վոն տխրանք,

3 ձայնը.—Վոն հեղգանք:

1 ձայնը.—Լծակը ձեռքդ առ:

Բոլորը.—Լենին: Հիշում ենք, Լենին,

Քո ռազմիկ հրաման:

1 ձայնը.—Վորովեն գրոշն բոցերը թնդ,

2 ձայնը.—Նոր թափով թող դիմեն բանվորներ:

Բոլորը.—Չեզ հեա ե Լենինը ամեն ոք,

Ապրում ե Լենինը, չե մեռել:

Ռուս կոմյունիստ.—Վրադիմիր Իլիչը յերազող չեր, բայց յեթե նա յերազում եր մի բանի մասին, այդ նոր սերունդն եր, բանվոր յերիտասարդությունը, վորը կառուցելու յե այն, ինչի համար քանդել են ձերերը:

1 ձայնը.—Յերբ առաջնորդն ե ընկնում,

2 ձայնը.—Ճամբան դառնում ե դժար

3 ձայնը.—Կարմրադրոշ պուրակներում,
Ուր փայլում ե Լենինի դեմքը պայծառ:

1 ձայնը.—Յերբ առաջնորդն ե ընկնում,

2 ձայնը.—Վոստիներն են գաղտուկ սողում:

3 ձայնը.—Բայց հզոր ե ույժն իմաստուն:

Բոլորը.—Ուսուցիչն ընկավ—լենինիզմը կա:

Լիբերեստ ու Լենին—մեր զրոշն ահա:



ՅԵՐԴՈՒՄ ԿԱՐՍԻՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ — ՄՈՍԿՎԱ

ԱԼ ՀՈԿՏԵՄԵՐ

Պոեմալից մի հատված

Հանկարծ բեմը կարմրում է. խոր-
քում յերևում է հինգթեյան կարմիր
աստղը, պլակատ «Ալ-Հոկտեմբեր»:

Արագ կերպով մտնում է Հոկտեմ-
բերը ձեռքին կարմիր դրոշ ու կարմիր
հագած: Ամիսները շրջապատում են
Հոկտեմբերին:

Ամիսներ. — Ուր էյիր, Հոկտեմբեր:
Հոկտեմբեր (բարձր լեզվ խոսիս). —

Նոր լուր եմ բերել,
Անգին ընկերներ.
Վողջույն են զրկել
Ձեզ շատ բանվորներ:
Աշխարհն է փոխվել.
Ձկա ախ ու վախ,
Աշխարհ է ծնվել —
Կարմիր ու անվախ:

Մայիս (ուրախ). —

Աշխարհն է փոխվել...
Ինչ լավ է յեղել:

Հունվար. — Ինչ է յեղել...

Փետրվար. — Ինչ է փոխվել...

Հոկտեմբեր. — Աշխարհն է փոխվել,

Աշխարհ է ծնվել —
Կարմիր ու անվախ:

Մայիս. — Դեհ, պատմիր լսե՛ք:

(Բոլոր ամիսները, բացի Գեկ-
տեմբերից, շրջապատում են Հոկ-
տեմբերին):

Հոկտեմբեր. — Պատմում եմ, լսե՛ք,

Միաներգ պահե՛ք.
Թուա ու հասա մի մեծ
հրապարակ,

Չորս կողմը տխուր, կասես
ավերակ.

Մութ նկուղներից

Անթիվ, անհամար

Բանվորներ յեղան

Ինձ նման նիհար:

Շրջապատեցին

Ու հարցեր ավին.

— Դու ի՞նչ ես ուզում,

Ի՞նչ ես պահանջում...

Ասի, յեկել եմ դույնս
փոխելու,

Ասի, յեկել եմ յես կարմրելու:

Ամենքը լուռ են

Ու ինձ են նայում:

Մի տուն ինձ տարան,

Մութ, խոնավ ու նեղ,

Մեջ տեղ մի սեղան,

Ժողով կար աջանեղ:

Սեպտեմբեր. — Քեզ ի՞նչ ասացին,

Ինչո՞վ պարկեցին:

Հոկտեմբեր. — Կարմիր բառերով,

Կարմիր մտքերով.

Կրակ էր յեխում

Նրանց բերանից,

Վրեժ էր ժայթքում

Նրանց սրտերից:

Կեղտոտ, սև շորեր,

Կոշտացած ձեռքեր,

Ամենքը բանվոր,

Անթիվ, անհամար,

Բոլորն ինձ նման

Տանջված ու նիհար...

Սեպտեմբեր.— Դու մի ասա, ի՞նչպես

Դարձար դու ալ-կարմիր:

Հոկտեմբեր.— Յես կրակ կարած,

Նրանց առաջն ընկած,

Հասանք հրապարակ,

Խորխա կանգ առանք:

Մայիս.— Ո՞վ կար այնտեղ,

Ի՞նչ կար այնտեղ:

Հոկտեմբեր.— Ի՞նչ միտքներ...

Խոզի նման

Հաստ-հաստ վզեր,

Գոմշի նման

Տոգած փորեր:

Բուրժուականներ,

Գեներալներ...

Ինձ հարցրին.

— «Ի՞նչ ես վառվել,

կրակ կարել,

Արար աշխարհ

Իրար գցել»:

Յես ասացի.

— «Ես աշխարհը յես ուզում եմ

Փոխել հիմքից,

Ու քանդելը յես սկսում եմ

Ցարի գահից»:

Ինձ վոր տեսան բանվորները,

Նկուղներից յեղան հասան,

Թե-թիկունքով միացան,

Գրոհ ավին...

Արյուն... կրակ...

Մահ ու դիակ...

Շատերը մեր վոտքերի տակ

Տրորվեցան,

Չբացան:

Կոիվը վերջացավ,

Նոր որ լուսացավ...

Են մեծ աշխարհն հիմա

խաղաղ,

Կյանքը, որը աղատ, ուրախ,

Նոր արև և փայլիլում,

Որը-որին հաճեանում,

Նորոգվում և

Ու ծաղկում:

Սեպտեմբեր.— Դու են ասա մեզ՝

Կը մնա աղաղես

Կարմիր, անթառամ:

Հոկտեմբեր.— Այո, կմնամ

Հաճախ կարմիր,

Քանի վոր կա

Բանվոր կարմիր,

Հաճախ կարմիր,

Քանի վոր կա

Ալ սիրա կարմիր:

Մայիս (հանդիսավոր).—

Հոկտեմբերը միշտ կլինի

Մեր ամենիս սիրելին,

Հոկտեմբերը ամիսների

Թագ-պսակը—գովելին...

Բոլոր.—

Կեցցե կարմիր Հոկտեմբերը,

Կեցցեն կարմիր բանվորները:

Մայիս.—

Դեհ, ամիսներ, պար բռնենք,

Ալ Հոկտեմբերը գովենք,

Գովքն անենք արևի,

Աշխարհ վառի, կարմրի:

Բոլոր (Հոկտեմբերին օղջապատած).—

Հոկտեմբերը նոր արև—

Աշխարհ ծաղկի նրանով,

Հոկտեմբերը մեծ պարզի,

Աշխարհ կապրի նրանով:

(Պսակ են կապում Հոկտեմբերին յեվ մեջ առած բալետ պարում):

Վարագույր

Տ. Ս.-յան

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՅԵՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

Այսօր, յերբ Մեծ Հոկտեմբերն իր առաջին տասնամյակն է տոնում, մենք պարտավոր ենք, գոնե մի քանի խոսքով, վերհիշել այն մեծ դեմքերն ու ույժերը, փորձեր փոշ միայն հեղինակ դարձան այդ Մեծ գործի, այլև իրենց հերոսական ջանքերով ամրապնդեցին Կարմիր Հոկտեմբերի նվաճումները:

Շատերը զրանցից մահ գտան քաղաքացիական կռիվում, շատերը ապրում են այսօր ու իրենց հաղթական հայացքը ձգում այն որոնքին, փորտեղ մնում ու աճում և փոշ միայն մեր, այլ և ամբողջ մարդկություն հույսը, նրա հեղափոխական թափը վաղվա վճռական մարտի համար, ի սարսափ բոլոր տղուկների, շահագործողների և ճնշողների:

Աշխատանքը պետք է հաղթանակի:

Յեվ փորձափ մենք մոռենանք այդ հաղթանակին, այնչափ գուրգուրանքով պետք է հիշենք այն հերոսների անունները, փորձեր տալու տարի առաջ հեռավոր Հյուսիսի ցուրտ գիշերներին պահակ կանգնած. յերբեք չը դավաճանեցին իրենց դիրքերին, այլ տարված հաղթանակի հավատով իրենց գործի վեհաթյամբ, միշտ առաջ խաղացին:

1870—1924

Հոկտեմբերյան Հեղափոխության հեղինակի—ղեկավարի—ընկ. Լենինի կենսագրականի հետ ծանոթ է ամեն մեկը, և մենք այստեղ կանգ չենք առնելու այդ Մեծ Մարտու կյանքի նկարագրության վրա, այլ կբավականանանք այն անկեղծ առաջ բերելով, փորը լրացրել և ինքը Լենինը կոմ-մունիստական կուսակցության X համագումարին (ընկ. Լենինի մանրամասն կենսագրությունը կարող ենք գտնել «Կարմիր Ծիլերի» №№-ում):

Ծննդյան տարին—1870 թ.:

Առողջաբյուր.—Առողջ եմ:

Ի՞նչ յեղուների յեվ սիրապետում.—Անգլիկներին, գերմաներին, ֆրանսիերին—վատ, իտալերին շատ վատ:

Ռուսաստանի վո՞ր տեղերին եմ լավ ծանոթ յեվ վո՞րտան տարի յեվ ապրել այնտեղ.—Ծանոթ եմ Մերձփոլսյի շրջանին, փորտեղ ծնվել եմ յես և անցկացրել մանկությունս մինչև 17 տարեկան հասակս:

Համառոտական վո՞ր համագումարներին մասնակցել եմ զուտ.—Բոլորին, բացի 1917 թ. հուլիսյանից կամ ոգոստոսյանից:

Յեղե՞լ եմ տրեստանում.—Արևմտյան Յեվրոպայի մի շարք յերկրներում 1895 թ., 1900-1905, 1908-1917:

Զինվորական ի՞նչ պատասխանություն ունեմ.—Վոշ մի:

Կրթություն.—1891 թվին վերջացրել էմ (քննություն տվել վորպես էքս-տերն) Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

Ձեր հիմնական գրադրումներ մինչև 1917 թ.—Գրականագետ:

Ի՞նչ մասնագիտություն ունեք դուք.—Վոչ մի:

Ինչ՞ով ելիք գրավում 1917 թվից հետո, բացի կուսակցական, արհեստակցական, Խորհրդային լիկայի աշխատանքներից—Բացի հիշածից, միայն գրական աշխատանքով:

Ինչ արհեստակցական միության եք պատկանում այժմ.—Լրագրողներին միություն:

Ձեր աշխատանքներ 1917 թվից սկսած.—Նախագահ ժողովրդ. Կոմիտե-ների Խորհրդի և Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի:

Ի՞նչ ժամանակից անդամ եք դուք Ռուս. կուսակցության.—1894 թ.:

Պատկանե՞լ եք այլ կուսակցություն լիկ յեթե այո՞ վո՞րին.—Վոչ:

Ձեր մասնակցությունը հեղափոխական շարժման.

Յ ե ր բ	Վո՞րեղ	Ի՞նչ կազմակերպություն
1892—1893	Սամարա	Սոցիալ-դեմոկրատ.
1894—1895	Պետերբուրգ	գաղտնի խմբակներ-
1895—1897	Բանա	բում, իսկ Ռուսաս-
1898—1900	Յենիսեյսկ համ.	տանի սոցիալ-դեմո-
1900—1905	Արտասահման	կրատ. կուսակց. հիմ-
1905—1907	Պետերբուրգ	նելուց հետո—անդամ
1908—1917	Արտասահման	այդ կուսակցության:

Յենիսեյսկի՞ եք արդյոք հայրամանների հեղափոխական գործունեություն համար.—1897 թ. ձերբակալվել եմ, 1895-1897 ձերբակալություն, 1998-1900—Սիբիր, 1900—ձերբակալություն:

Ի՞նչպես ժամանակ եք բանի մեջ.—Մի քանի ար պլյուս 14 ամիս:

Ահաբեում կամ կասողալում (սաժանակիս աշխատանք)—3 տարի, եմիդ-րացիայում՝ 9—10 տարի:

Ս Ս Ա Լ Ի Ն

Համախորհրդային Կոմուն. Կուսակց. Կենտր. Կոմիտ. գեր. քարտուղար. Յոսիֆ Վիսարիոնովիչ Ջուղաշվիլին (Ստալին, Կորա) ծնվել է 1879 թ. Վրաս-տանում: Հայրը գյուղացի յեր և արհեստով կոշիկակար: Փոքրիկ Յոսիֆը պի-տի հոր արհեստը սովորեց, յեթե նրան 1892 թվին չը տային հոգևոր դպրո-ցը—սիմիոնարիա: 17 տարեկան հասակում Ստալինը կաղձակերպում և զեկավարում է աշակերտական գաղտնի խմբակներ, վորի համար 1898 թվին արձակվում է գաղթից, վորպես «անբարեհույս»: Դպրոցից ար-ձակվելուց հետո, Կորան նվիրվում է կուսակցական աշխատանքների և 1898 թվին մտնում է Սոց. Դեմոկր. Թիֆլիսի կաղձակերպությու-նը: 1901 ի իրադարձությունից հետո, նա անցնում է Բաթում և այստեղ կաղձակերպում մարքսիստական առաջին խմբակը: 1902-ին Բաթումում

տեղի ունեցած բանվորական ցույցի հետևանքով ձերբակալվում է: 1903-ին նա նստել է Բաթումի և Բուխարի բանտերում, իսկ 1903-ին 3 տարի ժա-մանակով աքսորվում Սիբիր, վորտեղից փախչում է: 1908-ին Ստալինը նորից ձերբակալվում է (Բազմի Կոմիտեյի գործով) և աքսորվում Վոլոգդայի նահանգը 3 տարով:

Այստեղից փախչում է և գալիս Բազու ու շարունակում հեղափո-խական աշխատանքները: Շուտով այստեղ ել ձերբակալվում է և արգեն 6 տարով աքսորվում: Մեկ տարի հետո փախչում է աքսորավայրից և գալիս Պետերբուրգ: Մի քանի ամիս այստեղ աշխատելուց հետո, Ստալինին ձերբակալում են և 1911 թվին աքսորում դարձյալ Վոլոգդա (3 տարով):

Այնուհետև, ելի մի շարք նոր հալածանքներից հետ, աքսորվում է հեռա-վոր հյուսիսի «բեհոալին շրջանը», վորտեղ և մնում է մինչև 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը: Փետրվարյան հեղափոխությունից հե-տո նա խմբագրում է մի շարք թերթեր: Գալիս է Հոկտեմբերյան հեղա-փոխությունը և Ստալինը աչքի ընկնող գեր է խաղում, վորպես կուսակցու-թյան կենդր. Կոմիտեյի անդամ, Ազգային փոքրամասնությունների կոմի-տար, գլխավոր-հեղափոխական խորհրդի անդամ, բանվոր-գյուղացիական տեսչություն ղեկավար: 1922 թվին նա ընտրվում է Կոմ. Կուսակցության կենտրոնական Կոմիտեյի գերագույն քարտուղար և մինչև այսօր ել շարու-նակում մնալ այդ պաշտոնում:

Ստալինը Լենինի ավանդներն իրականացնող ու մարմնացնող խոշոր ներկայացուցիչներից մեկն է, և այսօր նրան է ունկնդրում վոչ միայն Խոր-հրդային Միությունն, այլ և ամբողջ Յեվրոպան:

Բ Ո Ւ Խ Ա Ր Ի Ն

Կոմմունիստական Կուսակցու-թյան հրապարակախոսներից, ինչպես և կուսակցական գրակա-նության ու մարքսիզմի տա-ղանդավոր ժողովրդականացնող-ներից մեկն է Նիկոլայ Իվանովիչ Բուխարինը:

Բուխարինը ծնվել է 1888 թվին: Հայրը ուսուցիչ էր: Գիմնազիան ավարտելուց հետո Բուխարինը մտնում է Նախ Մոսկվայի, ապա Վենայի համալսարանների իրա-վաբանական ֆակուլտետ: Դեռ 18 տարեկան հասակում (1906) մտնում է Ռուս.-Սոց.-Դեմ. (մեծամասն.) կուսակցությունը,



խակ յերկու տարի հետո (1908) ընտրվում Մոսկվայի Կոմիտեյի անդամ։ Հեղափոխական ակտիվ աշխատանքների համար 1910-ին ձերբակալվում է և մի տարի բանտում պահվելուց հետո արքայազն Սիբիր։ Այստեղից փախչում է արտասահման, վերադառնում է միայն 1917 թ. հեղափոխությունը։

Արտասահմանում ծանոթանում է Լենինի հետ և գաղտնի նրա ամենաշքի ընկնող և հավատարիմ աշակերտներից մեկը։ Դեռ արտասահմանում Բուխարինը աչքի ընկնող դեր է կատարում միջազգային բանվորական շարժման մեջ, վերադառնալուց ազդեցություն է փոխանցում Մոսկվայի և Վոլոգդայի միջև, այլ և գերման, ավստրիական և ամերիկյան բանվորության մեջ։ Սրա հետ միասին նա զբաղվում է գրականությունով և մի շարք նշանավոր գրվածքներ տալիս։

1917 թվին, արտասահմանից վերադառնալուց հետո, աշխատում է Մոսկվայի բանվորության մեջ և Հոկտեմբերյան հեղափոխության որերին անփոխարինելի ղեկավար դառնում այդ նույն բանվորության։

1917 թվին ընտրվում է Կոմկուսի Կենտրոնական Կոմիտեյի անդամ։

Սրա հետ միասին նա անդամ է III Կոմմունիստական Ինտերնացիոնալ Գործադիր Կոմիտեյի և խմբագիր «Правда» թերթի։

Ռ Ի Կ Ո Վ



Ալեքսեյ Իվանովիչ Ռիկովը ծնվել է 1881 թվին Սարատովում։ Հայրը գյուղացի էր։ Դեռ աշակերտական նստարարներից ընկ. Ռիկովը կապ է հաստատում բանվորական խմբակների, ապա և Սոց. Դեմոկրատական կուսակցության հետ։ Ռիկովը համարվում էր յեռանդուն հեղափոխական աշխատող և լավ մարքսիստ, վերջ համար ին կառավարությունը նրան ձերբակալում է և արքայազն։ Աքսորվելուց փախչում է արտասահման և ժնկում ապրում է Լենինի մոտ... Լենինի հանձնարարությամբ վերադառնում է Ռուսաստան և աշխատում մի շարք նահանգներում։

1905 թվին նա, վերադառնալուց Փրակցիայի ներկայացուցիչ, մասնակցում է Լենինգրադի Խորհրդին։ Այնուհետև մի քանի անգամ ձերբակալվելուց և արքայազնից, ինչպես և արտասահման փախչելուց հետո, 1911-թվին, վերադառնում է Ռուսաստան՝ կուսակցական համագումար կազմակերպելու համար, բայց ձերբակալվում է և արքայազն։

Փետրվարյան հեղափոխությունը նրան ազատում է արքայից։ Ռիկովը

աշխատում էՆնախ Մոսկվայում, իսկ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ՝ Լենինգրադում։

Լենինի մահից հետո ընկ. Ռիկովը ընտրվում է Միության Ժողովրդական Կոմիտեի Խորհրդի նախագահ։ Կուսակցության մեջ է 1902 թվից։

Կ Ա Լ Ի Ն Ի Ն

Միխայիլ Իվանովիչ Կալինինը ծնվել է 1875 թ. Տվերի նահանգի գյուղերից մեկում։

Մանուկ հասակում նա շատ էր փափաղում ուսում ստանալ։ Գյուղական տարրական ուսումնարանն ավարտելուց հետո նա մտնում է «Լակեյուսյան» (սպասավոր)։ Այստեղից նրան աջակցում է մանկ նախ Լենինգրադի փամփուշտի գործարանը, իսկ հետո՝ Պուտիլովյան գործարանը, ուր նա ծանոթանում է հեղափոխական գրականության։ 1898-ին նա մտնում է Սոց. Դեմ. Բանվ. կուսակցության մեջ, ձերբակալվում է։ Բանախցի հետո նա գալիս է Թիֆլիս և աշխատում է յերկաթուղագծի գեղություն, վերադառնալուց Կալինինը չի հրաժարվում հեղափոխական գործից, չընայած նրան, վեր նա իր կյանքի մեծագույն մասը մաշել է բանտերի և արքայի մեջ։ 1914 թվին Կալինինը ուժեղ պրոպագանդ է մղում պատերազմի դեմ, վերջ պատժառում բանտարկվում է։ Փետրվարյան հեղափոխությունը նրան ազատում է բանտից, իսկ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ նա արդեն աշխատում է Լենինգրադում։

Այսօր էլ Կալինինը նախագահ է Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և անդամ Կոմկուսի Կենտկոմի։




ՈՐՁՈՆԻԿԻՁԵ

Սերգո Որջոնիկիձեն ծնվել է Բուխարին գավառում 1886 թվին։ Մասնագիտությամբ ֆելդշեր է։ Կուսակցության անդամ է համարվում 1903 թվականից։ 1912 թվին մասնակցել է Պրակցի կուսակցական կոնֆերանսին, իսկ Հոկտեմբերյան հեղափոխության որերին՝ Լենինգրադի կոմիտեին։ Հետագա քաղաքացիական կռիվներին հարմարվել է աչքի ընկնող զինվորական գործիչներից մեկը։ Նա մասնակցել է Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում



սում սպիտակները դեմ վարած կոխվելներն: Անդամ է յեղել Կովկասյան կարմիր բանակայինների Ձինվորահրամայական խորհրդին: Անդամ է նաև Կոմկուսի Կենտրոնական Կոմիտեյի, ինչպես և Համամիութենական Կոմունիստ. Կուսակցության Յերկրային Կոմիտեյի պատասխանատու քարտուղար: Վերջին տարիները նա ընտրվեց Բանվորա-Գյուղացիական Տեսչության նախագահ և Հ. Կ. Կ. Կ. Կ. նախագահ:



ՖՐՈՒՆԶԵ

Միխայիլ Վասիլևիչ Ֆրունզեն համարվում էր տաղանդավոր Ձինվորական զործիչ, ջախջախող կողջակյան ճակատի և վերջ տվող վրանգելյան ապստամբության: Նա կուսակցական էր 1905 թվից: Հեղափոխական աշխատանքների համար նա 1907 թվին մահվան դատապարտվեց, բայց այդ դատավճիռը փոխվեց տաժանակիր աշխատանքի: Մեծ դեր խաղաց Մոսկվայի հոկտեմբերյան ապստամբության ժամանակ: 1925 թվին նշանակվեց Ձինվորա-Հեղափոխական խորհրդի նախագահ և զինվորական կոմիտեի անդամ էր: Մեռավ 1925 թվի հոկտեմբերի 31-ին:

ՋԵՐԺԻՆՍԿԻ (1877-1926)

Ֆելիքս Եղմուսյանի Ջերժինսկին, լեհական և Լիտվայի սոց. դեմոկր. կուսակցության այդ ականավոր զործիչը ծնվել է 1877 թ: Նա սովորում էր Վիլնոյի գիմնազիայում, բայց 1894 թվին թողնում է գիմնազիան և ընդմիջում նվիրվում հեղափոխական աշխատանքներին: 1895 թվին մեռնում է Լիտվայի Ս. Դ. կուսակցության մեջ, 1897 թվին ձերբակալվում է և աքսորվում Վլատկայի նահանգը, 1899-ին փախչում է աքսորավայրից և գալիս Մոսկվա, զորքերից կեղծ անցագրով անցնում Վար-




շավա: Չընայած անվերջ ձերբակալություններին և աքսորներին, վորին յենթակա յեր, նա չի հուճահատվել և ավելի մեծ յեռանդով առաջ տարել հեղափոխական գործը: 1900-ին աքսորվում է Սիրիեր, բայց ճանապարհից փախչում ու անցնում է արտասահման: 1906-ին վերադառնում է Լեհաստան և կապ հաստատում լեհ բանվորների հետ:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունը նրան ազատում է բանտից: Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ նա Լենինգրադում էր, վորպես Ձինվորա-Հեղափոխական խորհրդի անդամ: 1917 թվից նախագահ էր Հատուկ Հանձնաժողովի: 1921 թվին նշանակվում է ներքին գործոց աղա հաղորդակցության կոմիտեի, իսկ 1923-ին՝ Տնտեսական Գերագույն խորհրդի նախագահ:

Ջերժինսկին 1917 թվից անդամ էր Կոմկուսի Կենտր. Կոմիտեյի: Վախճանվեց 1926 թ.

Դ. Վ. ԿԱՆԴԵԼԱԿԻ

Վրաստանի Ժողովրդական Լուսավորության Կոմիտեի և ընկ. Դավիթ Վլադիմիրովիչ Կանդելակին: Յեթն այսոր Վրաստանը պարծենում իր նվաճումներով լուսավորության ճակատում, այդ բանի խոշորագույն տոկոսը պետք է վերագրել ընկ. Կանդելակուհմուտ ձեռքին: 1921 թվից մինչև այսոր ընկ. Կանդելակին մնում է Վրաստանի Լուսավորման պաշտոնում:





Ընկ. Մարիա Պատրոնովնա Որախե-
լաշվիլին համարվում է Պորճրդային
Վրաստանի ամենաակտիվ կին գոր-
ծիչներից մեկը: Վրաստանի խորհրդայ-
նացման առաջին որերից նա տանում
է Վրաստանի Լուսավորման Սոց.
Դաստիարակության վարչի և Լուս-
վորչության ոգնականի պարտականու-
թյունները: Ընկ. Որախելաշվիլին աչք
հին բողևիկ կին գործիչներից մեկն է,
վորը ցարական և մենշևիկյան կառա-
վարությունների կողմից յենթարկվել
և հալածանքների:

ՇԱԼՎԱ ԵԼԻԱՎԱ


Շալվա Ելիավան ծնվել է 1885 թ.
Քուխաթի գավառում, ուսումը ստա-
ցել Քուխաթի գիմնազիայում և Պե-
տերբուրգի համալսարանում: Համալ-
սարանն ավարտելուց հետո ծառա-
յել է զանազան հիմնարկություննե-
րում, միաժամանակ, փորպես սոցիալ-
դեմոկրատական կուսակցության ան-
դամ, պրոպագանդ մղելով բանվորու-
թյան մեջ: Հեղափոխական պրոպագան-
դի համար նա յենթարկվել է աքսորի:
Վրաստանում յեղել է Վրաստանի
Ժողովրդական կոմիտեների Պորճրդի
նախագահ, աչնուհետև Պորճրդային
Միության ճանապարհների ու հաղոր-
դակցության կոմիտեի քարտեզ
ներկայացուցիչ Անդրկովկասում, ինչպես և անդամ Պորճրդային Միության
Զինվորա-Հեղափոխական Պորճրդի և Ս. Ս. Հ. Միության ու Անդրկովկասյան
Կենտրոնական Գործ. Կոմիտեների: Այսպիսով նախագահ և Անդրկովկասյան
Կոմիտեների Պորճրդի:



ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

(1886-1925)

Ալ. Միասնիկյանը (Մարտունի) ծնվել
է 1886 թ. կուսակցության անդամ է յեղել
1915 թվականից: Նա պատասխանատու քար-
տեղար էր Կոմ. Կուսակցության Անդրկովկ.
Յերկրային Կոմիտեի: Նա հայտնի յե նաև,
փորպես հրապարակախոս, ունի մի շարք
գրվածքներ: 1825 թվին, յերբ Թիֆլիսից
պետք է Սուխում թռչեր սավառնակով,
Թիֆլիսի մոտերը սավառնակն այրվեց և նա
փոքրերգական մահ գտավ զեռ յերիտասարդ
հասակում:



ՆԱՐԻՄԱՆ ՆԱՐԻՄԱՆՈՎ

(1870-1925)

Նարիման Նարիմանովը Ազրբեջանի
գործիչներից էր: Ծնվել է 1870 թվին կու-
սակցության մեջ և մտել 1917 թ: Նա
Ազրբեջանի Կոմիտեների Պորճրդի նախա-
գահ էր, իսկ վերջերը նաև Ս. Ս. Հ. Միու-
թյան Կենտր. Գործ. Կոմիտեի նախագահ-
ներից մեկը: Մեռավ 1925 թ.



ՍՏ. ՇԱՆՈՒՄՅԱՆ

Քառնվեց կոմունարներից մեկն էր
Ստեփանոս Շանումյանը. նա անդամ էր
Կոմ. Կուսակցության Կենտրոնական Կոմի-
տեի, Անդրկովկասի հատուկ կոմիտե, Բաղ-
վի Ժող. Կոմիտեների Պորճրդի նախագահ:
Գնդակահարվեց անգլիացիների ձեռքով
1918 թվին:



ԱԼ. ԶԱՓԱՐԻԶԵ



Բոլշևիկ գործիչներին երևալու հայտնի չէր «Ալյոշա» կեղծանունով: Զբոսաշրջական հալածանքներին, Ալյոշան չեղարկեց ի վնասակար և շարունակել և հեղափոխական աշխատանքները, մանավանդ Բագվի բանվորության մեջ: Անգլիական ագենտների Բագուն գրավելուց հետո, Ալյոշան մյուս 25 կոմիտեի անդամների հետ տարվեց Անդրկասպյան շրջանը և գնդակահարվեց աշտուղի անապատում:

ԱՂԱՄԱԼԻ ՈՂԼԻ

Աղբրեջանի հին բոլշևիկներին և Աղամալի ողլին. նա հայտնի չէ մեր մեջ փոշի միայն վորպես Աղբրեջանի պատասխանատու գործիչ, այլև Անդրկասպյան Ֆեդերացիայի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության անդամ: Այսօր նախագահ և Աղբրեջանի և Արդրեովի Կենտրոն. Գործ. Կոմ.



ԼՈՒԿԱՇԻՆ

(Մադյունյան)

Անդրկասպյան Կոմիտեի անդամների խորհրդի նախագահի ոգնականն է ընկ. Լուկաշինը: Զանազան ժամանակներում նա վարել է կուսակցական և պետական պատասխանատու պաշտոններ թե՛ Հայաստանի և թե՛ Անդրկասպի մասշտաբով: Յերկար ժամանակ վարել է Անդրկովկ. Պետականի նախագահի պաշտոն: Այսօր նախագահ է Անդրկով. Բանվոր-Գյուղացիական Տեսչության և Անդրկ. Կոմիտեի անդամների խորհրդի նախագահներից մեկը:



Մ. ՅԵԱԿԱՅԱ

Միխայիլ Յեակայան հին բոլշևիկ է: Անդրկասպյան Կենտրոն. Գործ. Կոմիտեի նախագահ: Յերկար ժամանակ չեղել է արտասահմանում, իսկ 1917 թվի հեղափոխությունից հետո վերադարձել է Ռուսաստան: Վրաստանի խորհրդայնացումից հետո ընկ. Յեակայան պատասխանատու պաշտոններ է վարում թե՛ Վրաստանի, թե՛ Անդրկովկասի և թե՛ Միտլիցյան մասշտաբով: Այսօր նա նախագահ է Անդրկ. Կենտրոն. Գործ. Կոմիտեի:




ՄԱՄԻԱ ՈՐԱԽԵԼԱՇՎԻԼԻ



Մամիա Որախելաշվիլին այսօր պատասխանատու քարտուղար է Կոմ. Կուսակցության Յերկարային Կոմիտեի: Յերկար ժամանակ վարել է Անդրկասպյան և Վրաստանի Կենտ. Գործադիր Կոմիտեի նախագահի պաշտոնը:

ՄԱԽԱՐԱԶԵ

Ֆելիպպ Մախարաձեն այսօր նախագահ է Վրաստանի Կենտրոն. Գործ. Կոմիտեի: Հայտնի չէ, վորպես հին և փորձված հրապարակախոս: Նա Վրաստանի Հեղափոխական Կոմիտեի առաջին նախագահն էր:



Ս. ԿԱՍՅԱՆ



Ընկ. Սարգիս Կասյանը ծնվել է Շուշի քաղաքում 1876 թ.: Մանուկ հասակում ծնողների հետ տեղափոխվեց Բագու: Այստեղ մտավ ռեալական դպրոցը, բայց 7-րդ դասարանից արձակվեց՝ աշակերտական գաղտնի խմբերում աշխատելու պատճառով: 1900 թ. գնում է Գերմանիա և սումը շարունակելու:

1902 թ. նա հարում է սոցիալ-դեմոկրատիայի ձախ թևին: 1905 թ. վերադառնում է Գերմանիայից Բագու և մի քանի ընկերների հետ միասին կազմակերպում է «Բանվորական Ջոյն» առաջին բոլշևիկյան գաղտնի թերթի հրատարակությունը: Այ-

նուհետև գալիս է Թիֆլիս և Շահումյանի ու Սպանդարյանի հետ խմբագրում նախ «Կայծ», ապա «Նոր Սոս» թերթերը: Իսկ սրանց փակվելուց հետո՝ «Բագվի Որեր»-ը: Քիչ հետո գալիս է Թիֆլիս և կազմակերպում «Մեր Սոս» թերթի հրատարակությունը:

1913 թվին ընկ. Կասյանը ձերբակալվում է և արստրվում Վոլոգդա, փորտեղից Թիֆլիս և վերադառնում փեռվարյան հեղափոխությունից հետո:

1919-ին մենշևիկները նրան ձերբակալում են: Ընկ. Կասյանը փախչում է Հայաստան, փորտեղ վերականգնում է տեղական կազմակերպությունը:

1920 թ. դաշնակցականները նրան ձերբակալում են և արտաքսում Հայաստանի սահմաններից, բայց նա շուտով ապստամբ գյուղացիների հետ միասին գալիս է Հայաստան և Հայաստանը Խորհրդային հայտարարում: Ընկ. Կասյանը ընտրվում է Հայաստանի Հեղափոխական կոմիտեի նախագահ:

Դաշնակցականների ավանտյուրայից հետո նա քաշվում է Մոսկվա և այդտեղից վերադառնալով, սկսում է խմբագրել «Կարմիր Աստղ» թերթը և «Նոր Աշխարհ» ամսագիրը: Ընկ. Կասյանը 1923-ից նշանակվում է Կոմմունիստական Համալսարանի ուսկուռ, իսկ 1927 թվին ընտրվում Անդրկովկասյան Կենտր. Գործադիր կոմիտեի նախագահ:

„ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ“

(Մանկական յերձայն խմբի համար)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Խոսք՝ Վազգեն Տալանի

Յերմուսկյուն Վարդ Տալանի

Allegretto

Soprano
Alt.

Piano

հոգ-դեմքերն եմ ցաս-նախ-յա, ճն-վաճ կար-միտ ճոր-բեր-կից,

հոգ-նող բազ-կին կա-րե-կից, ճի-ակ ճար-դի-կըն նա-հա

a tempo

alt.

Soprano

ճեր-գրս բերեալ ին-դունդեն ու հան-դոմիճյեր-րի, ճեր-գրս բերեալ ու ին-դունդեն

Handwritten musical score for "The Song of the Lark" by Komitas. The score is written on three systems of staves, each with a vocal line and a piano accompaniment. The lyrics are in Armenian. The first system includes the tempo marking "poco rit." and the second system includes "a tempo" and "poco rit.". The third system includes "a tempo", "rit.", and "ff".

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՏԱՄՆԱՄՅԱԿԻՆ

Գլուղական փաթեանտ

benut W.—L.Gh

Յերածեսարյուն Արմեն Տիգրանյանի

Handwritten musical score for "The Lord's Prayer" in Armenian. The score is written on aged paper and includes three systems of music.

The first system is for Piano, marked "Moderato" and "dolce". It features a treble staff with a key signature of one sharp (F#) and a 6/8 time signature. The melody is written in a simple, flowing style.

The second system is for Canto, marked "Moderato assai". It includes Armenian lyrics written below the notes. The lyrics are: "Գարնան քաղաքս շինեցի քաղաքս հարսնացի" (Garun's city I built, Garun's daughter). The notation includes treble and bass staves with various musical symbols and notes.

The third system continues the piano accompaniment, featuring a treble staff with a key signature of one sharp (F#) and a 6/8 time signature. The melody is written in a simple, flowing style.

աւ - ցու-ցի. Ե-տր բա - լիս Կու - գե-ցի:

Յեր - Կար բո-յի- յես Տե- նեմ, Կար- յիւ սո- յի-
dolce -

յես Տե- նեմ զան:
morendo

Գարնան լալա ցանեցի,
Բալիս համար հասցուցի.
Տասը գարուն անցուցի,
Ետր բալիս զուգեցի:

Յերկար բոյիդ յես մեռնեմ,
Կարմիր սոյիդ *) յես մեռնեմ:

Ես աղջիկը տաս տարվան
Հոկտեմբերիկ իմ բալան

*) Սոյ նշանակում է տեսակ, ցեղ:

Ման ե գալիս ծըլվրան,
Դուռն զարկած են լալան:

Յերկար բոյիդ յես մեռնեմ,
Կարմիր սոյիդ յես մեռնեմ:

Ետր տոնիդ, Հոկտեմբեր,—
Տասը տարվան լուսարեր,
Բալիս եղավ տաս տարվան,
Կրծքին բուսավ զառ լալան:

Յերկար բոյիդ յես մեռնեմ,
Կարմիր սոյիդ յես մեռնեմ:



